

ՊՄՐՐՈ


ՀԵՔՅԱԹՆԵՐ



ՊԵՏԼՈԱՏ

845  
Պ-53







845  
7-53


Պ Ե Ր Ր Ո

Հ Ե Ք Յ Ա Թ Ն Ե Ր

Նկարներ  
Գ. Դ Ո Ր Ե Յ Ի

Ճրաններինց քարզմանեցին  
Վ Ե Ս Պ Ե Ր յեզ Զ Ր Բ Ա Շ Յ Ա Ն Հ.

51  
=



Պ Ե Տ Ն Ր Ս Ց

ՀԼԿՏԵՄ ԿԵ կից մանկապատանեկական գրականության բաժին  
Յ Ե Բ Ե Վ Ա Գ

1938





Б С С Р  
Дзяржаўная бібліятэка  
імя В. І. Леніна  
№ 10719

ЗША-Арм Р'Р

34243-62

### ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿԸ

— Գյուղում ապրում եր մի կին: Նա ունեւր մի փոքրիկ աղջիկ: Մայրը զնեց նրա համար մի կարմիր գլխարկ: Այդ կարմիր գլխարկն աղջկան այնքան դուր յեկավ, վոր նա միշտ գլխին եր պահում: Իրա համար ել բոլորը նրան կանչում եյին Կարմիր Գլխարկ:

Մի անգամ մայրը կարկանդակ յեփեց և ասաց.

— Կարմիր Գլխարկ, զնա տատիկի մոտ, տար նրա համար կարկանդակ և մի փոքրիկ ամանով կարագ ու խմացիր, թե ինչպէս ե նրա առողջութիւնը:

— Կարմիր Գլխարկն իսկույն ճանապարհ ընկավ դեպի մյուս գյուղը, տատիկի մոտ:

Անտառով զնալու ժամանակ նրան հանդիպեց մի գայլ: Գայլն ուզեց ուտել Կարմիր Գլխարկին, բայց չհամարձակվեց, վորովհետեւ այնտեղ՝ մոտիկ՝ աշխատում եյին փայտահատները: Իրա համար ել հարցրեց նրան.

— Ո՞ւր ես գնում, Կարմիր Գլխարկ:

— Գնում եմ տատիկի մոտ, — պատասխանեց նա, — տանում եմ նրան կարկանդակ և մի փոքրիկ ամանով կարագ:

— Իսկ հեռո՞ւ յե ապրում քո տատիկը, — հարցրեց գայլը:

— Շա՛տ հեռու, — պատասխանեց նրան Կարմիր Գլխարկը.

— ա՛յ, այն ջրաղացը, վոր յերեւում ե, նրանից այն կողմը:

— Լավ, — ասաց գայլը, — զնանք, յես ել եմ գալիս տատիկի մոտ: Յես գնում եմ այն ճանապարհով, իսկ դու զնա այն ճանապարհով. տեսնենք մեզնից ո՛վ չուտ կը հասնի:





Գայլն սկսեց վազել ամբողջ ուժով, ընտրելով ամենից կարճ ճանապարհը, իսկ Կարմիր Գլխարկն ամենից յերկար ճանապարհը՝ կաղին հավաքելով, թիթեռնիկների յետևից վազելով, ծաղիկներից փնջիկներ կազմելով:

Դեռ նա ճանապարհի կեսը չէր անցել, յերբ գայլն արդեն հասավ տատիկի տունը և դուռը ծեծեց.

— Թա՛հ, թա՛հ:

— Ո՞վ է,— հարցրեց տատիկը:

— Յես եմ, Կարմիր Գլխարկը, ձեր թոռնիկը,— պատասխանեց գայլը բարակ ձայնով:— Յես բերել եմ ձեզ կարկանդակ և մի փոքրիկ ամանով կարագ:

Տատիկը հիվանդ պառկած էր անկողնում: Խարվելով գայլի ձայնից, նա հավատաց, վոր Կարմիր Գլխարկն է և կանչեց.

— Քաշիր պարանը, վոր դուռը բացվի:

Գայլը քաշեց պարանը և դուռը բացվեց: Նա հարձակվեց տատիկի վրա և մի անգամից նրան կուլ տվեց:

Հետո փակեց դուռը, դնաց պառկեց տատիկի անկողնում և սպասեց Կարմիր Գլխարկին:

Շուտով նա յեկավ և դուռը ծեծեց.

— Թա՛հ, թա՛հ:

— Այդ ո՞վ է,— հարցրեց գայլը:

Կարմիր Գլխարկը նախ վախեցավ, լսելով գայլի հաստ ձայնը, բայց հետո կարծելով, վոր տատիկը հարբուխ ունի, պատասխանեց.

— Յես եմ, ձեր թոռնիկը՝ Կարմիր Գլխարկը: Բերել եմ ձեզ կարկանդակ և մի փոքրիկ ամանով կարագ:

Գայլը բղավեց.

— Քաշիր պարանը, վոր դուռը բացվի:

Կարմիր Գլխարկը քաշեց պարանը, դուռը բացվեց:

Յերբ նա ներս մտավ, գայլը վերձակով ծածկվեց, վորպեսզի աղջիկը նրան չճանաչի և ասաց.

— Դի՛ր վորևե տեղ փոքրիկ ամանով կարագն ու կարկանդակը և յե՛կ պառկիր կողքիս, քիչ հանգստացիր:

Կարմիր Գլխարկը պառկեց գայլի կողքին և ասաց.

— Տատիկ, ի՞նչ յերկար թե՛վեր ունես:

— Թոռնիկս, այդ նրա համար է, վոր քեզ ավելի լավ գըրկեմ:

— Տատիկ, ի՞նչ յերկար ականջներ ունես:

— Թոռնիկս, այդ նրա համար է, վոր քեզ ավելի լավ լսեմ:





— Տատիկ, ի՛նչ մեծ աչքեր ունես:  
— Թոռնիկս, այդ նրա համար ե, վոր քեզ ավելի բավ տես-  
նեմ:

— Տատիկ, այդ ի՛նչ մեծ-մեծ ատամներ ունես:

— Այդ նրա համար ե, վոր քեզ ուտեմ:

Այս խոսքն ասելուն պես, գայլը հարձակվեց կարմիր Գըլ-  
խարկի վրա և նրան կուլ տվեց:

Այդ ժամանակ տան մոտով անցնում էին փայտահատները:  
Նրանք աղմուկ լսեցին, վազեցին մտան տուն և սպանեցին գայ-  
լին: Հետո ձեռքեցին նրա փորը և այնտեղից դուրս հանեցին  
կարմիր Գլխարկին ու նրա տատիկին՝ վողջ և անվնաս:

БССР  
Дзяржаўная бібліятэка  
імя В. І. Леніна  
№ 10719



## ԿՈՇԿԱԿԱՐ ԿԱՏՈՒՆ

Մի ջրաղացպան, մեռնելով, իր յերեք տղաներին ժառանգություն թողեց ջրաղացը, եջը և կատուն: Յեղբայրները հորը թողած ժառանգությունն այսպես բաժանեցին. մեծ յեղբայրը վերցրեց ջրաղացը, միջնակը — եջը, իսկ փոքրին տվին կատուն:

Փոքր յեղբայրը շատ վշտացավ, վոր նրան տվին այդպիսի աննշան բաժին և ասաց.

— Յեղբայրներս կարող են պատվով վաստակել իրենց հացը, իսկ յես, անբախտս, կատուն ուտելուց և կաշվից թաթպան չինելուց հետո, ստիպված կլինեմ սովից մեռնելու:

Կատուն լսելով այս խոսքերն, ասաց նրան.

— Մի՛ վշտանար, տե՛ր, միայն թե ինձ տուր մի պարկ և մի դույզ կոշիկ, վորպեսզի մացառներով գնալիս վորտքս չվիրավորվի, և կտեսնես, վոր դու այնքան ել վատ ժառանգություն չես ստացել, ինչպես կարծում ես:

Կատվի տերն այնքան ել կարևորություն չտվեց նրա խոսքերին: Բայց գիտենալով նրա խորամանկությունը և ճարպիկությունը, նա մտածեց՝ կարող է պատահել, վոր կատուն վորեվե բանով իրեն ոգնի:

Յերբ կատուն տիրոջից ստացավ կոշիկները, իսկույն հագավ, վզից կախեց պարկը, մեջը լցրեց թարմ գազար ու կաղամբ, և գնաց անտառ, վորտեղ շատ ճագարներ կային:

Այնտեղ նա պառկեց մացառների մեջ և իրեն մեռած ձևաց-





ներով, սպասեց, վոր մի ջահել և անփորձ ճագար մտնի պարկը և այնտեղ յեղածն ուտի:

Հազիվ եր պառկել, յերբ հրապուրվելով գազարից՝ մի ջահել և հիմար ճագար մտավ պարկի մեջ: Կատուն անմիջապես նետվեց պարկի վրա և սպանեց ճագարին:

Այդ հաջող վորսից ուրախացած, Կատուն գնաց պալատ և խնդրեց, վոր իրեն թույլ տան գնալ թագավորի մոտ:

Կատվին թույլ տվին թագավորի առանձնասենյակը մտնել: Գնալով այնտեղ, նա խորը գլուխ տվեց թագավորին և նրան ասաց.

— Մեծ թագավոր, Իշխան Կարաբասը (Կատվի խելքին փրչեց այդպես անվանել իր տիրոջը) հրամայել է ինձ ձե՛զ ընծալել այս ճագարը:

— Ասա՛ Իշխան Կարաբասին, — պատասխանեց թագավորը, — վոր չնորհակալ եմ և շատ դժգոհ եմ նրա նվերից:

Կատուն քաղաքավարի կերպով հրաժեշտ տվեց թագավորին և դուրս յեկավ պալատից:

Հաջորդ օրը նա իր պարկով գնաց և թագնվեց ցորենի մեջ, միշտ պարկի բերանը բաց պահած:

Յերբ պարկի մեջ մտան յերկու կաքավ, նա բռնեց նրանց՝ յերկուսին ել և տարավ թագավորին: Թագավորը հաճույքով ընդունեց կաքավները և հրամայեց վարձատրել Կատվին մի գույք չաղ մկներով:

Այդպես յերկու-յերեք ամիս Կատուն զանազան վորսեր եր տանում թագավորին՝ Իշխան Կարաբասի անունով:

Մի օր Կատուն իմանալով, վոր թագավորը զբոսանքի յե գնալու գետի յեզերքն իր աղջկա՝ աշխարհի ամենագեղեցիկ Իշխանուհու հետ, ասաց իր տիրոջը.

— Յեթե լսես իմ խորհուրդը, դու կբախտավորվես քո ամբողջ կյանքում: Այսօր գնա՛ լողացիր գետում, այնտեղ, վոր յես քեզ ցույց կտամ, իսկ մնացածը յես կտարքեմ:

Տերը լսեց Կատվին և գնաց գետի ափը, առանց հասկանալու, թե այդ բոլորն ինչի համար է:

Լողանալու ժամանակ՝ գետի ափովն անցնում եր թագավորի կառքը:

Կատուն արդեն սպասում եր նրան, և յերբ կառքը մոտեցավ, նա բարձրաձայն կանչեց.

— Ոգնեցե՛ք, ոգնեցե՛ք, Իշխան Կարաբասը խեղդվում է: Լսելով այդ ձիչը, թագավորը գլուխը կառքից դուրս հա-

նեց և ճանաչեց Կատվին, վոր շատ անգամ իրեն վորս եր բերել, և հրամայեց իր ծառաներին, վոր անմիջապես ոգնության գնան Իշխան Կարաբասին:

Յերբ Իշխանին հանում ելին գետից, Կատուն մոտեցավ կառքին և հայտնեց թագավորին, վոր իր տիրոջ լողանալու ժամանակ գողերը յեկել և տարել են շորերը, թեև ինքը, Կատուն, ամբողջ ուժով ոգնություն և կանչել: (Սարեբան՝ դիամար թագերել եր իր տիրոջ շորերը մի մեծ քարի տակ):

Թագավորը հրամայեց իր մարդկանց անմիջապես բերել իր ամենագեղեցիկ շորերից մեկը Իշխան Կարաբասի համար:

Յերբ Իշխանն հագավ թագավորական զգեստները, թագավորն սկսեց սիրալիկ կերպով խոսել նրա հետ, ապա հրավիրեց նրան նստել կառք և միասին զբոսնել:

Իշխան Կարաբասը, լինելով բարեկազմ և գեղեցիկ, թագավորական զգեստների մեջ ե՛լ ավելի գեղեցկացավ, այնպես վոր յերիտասարդ Իշխանուհին միանգամից սիրահարվեց նրան:

Կատուն, ուրախանալով, վոր ամեն ինչ հաջող է գնում, այնպես, ինչպես ինքն եր մտածել, վազեց կառքի առջևից, և հանդիպելով խոտ հնձողներին՝ բարձրաձայն կանչեց.

— Ե՛՛յ, հնձվորներ, յեթե դուք թագավորին չասեք, վոր այս մարգագետինը պատկանում է Իշխան Կարաբասին, ձեզ բոլորիդ կտոր-կտոր կանեմ:

Յերբ կառքն անցնում եր մարգագետնի մոտով, թագավորն իսկապես հարցրեց նրանց, թե ու՞մն է պատկանում այդ մարգագետինը, վոր հնձում են:

— Իշխան Կարաբասին, — միաբերան պատասխանեցին հնձվորները (այնպես վախեցել ելին նրանք Կատվի սպառնալիքից):

— Ի՛նչ լավ կարվածներ ունեք, — ասաց թագավորն Իշխան Կարաբասին:

— Այո՛: — պատասխանեց Իշխանը, — իմ կարվածներն իսկապես վոր լավ են:

Իսկ Կատուն, վոր միշտ առջեվից եր վազում, հանգիպեց ցորեն հնձողներին և բարձրաձայն կանչեց.

— Ե՛՛յ, ցորեն հնձողներ, յեթե դուք թագավորին չասեք, վոր այս բոլոր արտերը պատկանում է Իշխան Կարաբասին, ձեզ բոլորիդ կտոր-կտոր կանեմ:

Թագավորն անցնելով արտերի մոտով, ուզեց իմանալ, թե նրանք ո՞ւմն են պատկանում:



— Իշխան Կարաբասին, — պատասխանեցին հնձվորները հարգանքով:

Իսկ Կատուն միշտ վազում էր կառքից առաջ և բոլոր նրանց, վոր հանդիպում էր, հրամայում էր ասել միևնույն բանը. թագավորը դարձացավ իշխանի հարստութեան վրա:

Վերջապես Կատուն հասավ մի գեղեցիկ դղյակի, վոր պատկանում էր մի շատ հարուստ Մարդակերի: Հենց այդ Մարդակերն էր իսկական տերը բոլոր այն արտերի և մարդագետինների, վորոնց մոտով անցել էր թագավորը:

Կատուն առաջուց իմացել էր, վոր Մարդակերը կարող էր փոխվել զանազան կենդանիների: Նա ներկայացավ Մարդակերին և վողջունելով ասաց, թե ինքը չէր կարող անցնել դղյակի մոտով, առանց նրա տիրոջ առողջութեանը հարցնելու:

Մարդակերն ընդունեց կատվին այնքան քաղաքավարի, վորքան կարող էր անել մի մարդակեր, և նստեցրեց նրան մի բազկաթուռի վրա:

— Ծատերը հավատացնում են, վոր դուք չնորհք ունեք փոխվելու ամեն տեսակ զազանների, — ասաց Կատուն Մարդակերին: — Ասում են, վոր դուք կարող եք, որինակի համար, դառնալ առյուծ կամ փիղ: Ընդհատ ե այդ:

— Այդ ճիշտ է, — հաստ ձայնով պատասխանեց Մարդակերը:

— Իսկ չե՞ք կարող ցույց տալ ինձ ձեր չնորհքը, — հարցրեց Կատուն:

— Կարող եմ, — ասաց Մարդակերը: — Ահա տես, հիմա յես կդառնամ առյուծ:

Յեվ զարնվելով հատակին, Մարդակերը դարձավ ահագին մի առյուծ:

Տեսնելով իր առջև առյուծին, Կատուն այնքան վախեցավ, վոր անմիջապես իրեն գցեց կտուրը, թեև այդպես անելն իր համար հեշտ և անվտանգ չէր, քանի վոր կոչիկով անհարմար էր մազլցել կտուրի վրա:

Յերբ Մարդակերը մարդկային կերպարանք ստացավ, Կատուն իջավ կտուրից և խոստովանեց, վոր սաստիկ վախեցել է:

Մարդակերը բարձրաձայն ծիծաղեց Կատվի վախիտութեան վրա:

— Ինձ հավատացնում են նաև, — ասաց նորից Կատուն, — վոր դուք ընդունակ եք նույնպես փոխվելու ամենափոքր զազանների. կարո՞ղ եք, որինակի համար, դառնալ առնետ, կամ





մուկ: Սոստովանում եմ, վոր դրան արդեն յեռ բուրովին չեմ  
կարող հավատալ:

— Չե՛ս հավատա, — աղաղակեց Մարդակերը, — ահա նա-  
յիր: Յե՛վ նույն բուրովին նա դարձավ մուկ ու սկսեց վազել հա-  
տակի վրա:

Կատուն խելույն նետվեց նրա վրա և կերավ:

Այդ ժամանակ թագավորը, վոր անցնելիս տեսել էր Մար-  
դակերի զեղեցիկ դրյալը, ուզեց ներս մտնել:

Կատուն, լսելով կամուրջից անցնող կառքի աղմուկը, վա-  
զեց դիմավորելու և ասաց.

— Բարի յեք յեկել, թանգագին հյուրեր, Իշխան Կարաբասի  
դրյալը:

— Ինչպե՛ս, Իշխան, — աղաղակեց թագավորը, — այս  
դրյալն էլ ձեզ և սրտականում: Վոչինչ չի կարող լինել ավելի  
զեղեցիկ, քան այս բախը և բուրը այդ շինությունները: Գնանք  
դրյալը, յեթե կարելի յե:

Իշխան Կարաբասն ողնեց Իշխանուհուն կառքից իջնելու և  
նրա հետ զնաց թագավորի յետևից:

Մեծ դահլիճում նրանց սպասում էր հիանալի ճաշկերույթ,  
վոր Մարդակերը պատրաստել էր իր բարեկամների համար:  
Այդ բարեկամները յեկել էյին նրան տեսնելու: Բայց, յերբ  
խմացան, վոր թագավորը գտնվում է դրյալում, չհամարձակ-  
վեցին ներս մտնել:

Թագավորը տեսնելով Իշխան Կարաբասի հարստությունը,  
հինգ բաժակ գինի խմելուց հետո ասաց.

— Լսեցե՛ք, Իշխան, չե՞ք ուզում արդյոք ամուսնանալ իմ  
աղջկա հետ:

Իշխանը հոժարակամ համաձայնվեց և այդ ուրն իսկ ամուս-  
նացավ Իշխանուհու հետ:

Դրանից հետո Կատուն կարևոր դիրք ստացավ և այլևս  
մուկ չեք վորսում, — միայն յերբեմն-յերբեմն հաճույքի համար  
վազում էր նրանց յետևից:



43

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԻՐԱԿԱՆ  
ԳՕՍ. ԵՐԾՆԱԿԱՆ  
ՀԱՍՏ-ԱՐՄ ԳՐԻ  
Ս. ԿՄ. Ա. ՄՅԱՇ  
ԿՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏ



## ՊՍՏԻԿ - ՃՍՏԻԿԸ

Ժամանակով ապրում էր մի փայտահատ իր կնոջ հետ. նրանք ունեյին յոթը յերեխա. բոլորն էլ տղա էյին:

Նրանք շատ աղքատ էյին ապրում և այդ յոթը յերեխաները նրանց համար բեռ էյին դարձել:

Ամենից փոքր տղան շատ կարճահասակ էր: Յերբ նա ծնվեց՝ մի մատից ավելի մեծ չէր: Այդ պատճառով էլ նրա անունը դրին Պստիկ-Ճստիկ:

Մի անգամ այդ յերկրում սարսափելի սով ընկավ: Փայտահատը չէր իմանում, թե ինչպես կերակրի իր յերեխաներին և վորոչեց ինչպես էլ լինի ազատվել նրանցից:

Մի յերեկո, յերբ յերեխաները պառկել էյին, փայտահատը նստեց կրակի մոտ, կնոջ կողքին և ասաց նրան.

— Մենք այլևս հնարավորություն չունենք կերակրելու մեր յերեխաներին: Յես չեմ կարող տանել, վոր նրանք մեր աչքի առջև սովից մեռնեն: Արի նրանց վաղը տանենք անտառ և թողնենք այնտեղ: Յերբ նրանք կզբաղվեն ցախ հավաքելով, մենք աննկատելի կերպով կհեռանանք նրանցից:

— Ա՛խ, ի՛նչ ես ասում, — աղաղակեց կինը: — Մի՞թե դու վճռել ես զո հարազատ յերեխաները տանել և կորցնել:

Փայտահատն սկսեց համոզել կնոջը: Թեև նա աշխատում էր պարզել իրենց թշվառ վիճակը, բայց եայնպես կինը յերկար ժամանակ չէր համաձայնվում: Սակայն մտածելով, թե վորքան անտանելի կլինի իրեն համար, յեթե յերեխաները սովամահ լինեն իր աչքի առջև. — նա վերջապես համաձայնվեց ամուսնու հետ և լաց լինելով գնաց պառկելու:





Պատիկ-ձստիկը լսեց նրանց բոլոր ասածները: Նա գարթնեց նրանց խոսակցութեան ժամանակ, կամացուկ իջավ անկողնից և թազնվեց այն նստարանի տակ, վորի վրա նստել էին ծնողները և լսեց ինչ վոր խոսեցին:

Հետո նա նորից գնաց պառկեց անկողնում, բայց ամբողջ գիշերը չկարողացավ քնել, մտահոգվելով իր անելիքի մասին:

Առավոտյան Պատիկ-ձստիկը ամենից շուտ վեր կացավ և գնաց գետի ափը: Այնտեղ նա գրպանները լցրեց փոքրիկ սպիտակ քարերով և աննկատելի կերպով վերադարձավ տուն:

Յերբ յերեխաները վեր կացան, հայրը և մայրը կերակրեցին նրանց և միասին գնացին անտառ՝ ցախ հավաքելու:

Յերեխաները վոչ մի բանի մասին չկասկածելով, ուրախ գնում էին իրենց ծնողների հետևից:

Նրանք յերկար գնացին և վերջապես հասան այնպիսի խիտ անտառ, վորտեղ տասը քայլի վրա չեք կարելի իրար տեսնել: Փայտահատն սկսեց փայտ կտրել, իսկ յերեխաները ցախը հավաքեցին և խուրճեր կապեցին:

Տեսնելով վոր յերեխաները գրողված են աշխատանքով, փայտահատն ու կինը աննկատելի կերպով հեռացան և փախան նեղ, հաղիվ նկատելի ճանապարհով:

Յերբ յերեխաները գլխի ընկան, վոր ծնողները իրենց մենակ են թողել անտառում, վախից սկսեցին լաց լինել և թղավել: Չեք վախենում միայն Պատիկ-ձստիկը: Նա գիտեր, թե ինչ ճանապարհով տուն պիտի վերադառնային: Յերբ նրանք գնում էին անտառ, Պատիկ-ձստիկը միշտ գրպանից հանում եր փոքր սպիտակ քարերը և գցում եր ճանապարհի վրա: Այդ քարերով նա կգտներ ճանապարհը և գուրս կդար այժմ անտառից:


— Մի՛ք վախենա, յեղբայրներ, — ասաց նա: — Յես կառաջնորդեմ ձեզ տուն:

Յեղբայրները հետևեցին նրան և նա նրանց առաջնորդեց տուն՝ այն ճանապարհով, վորով նրանք յեկել էին անտառ:

Նրանք վախեցան անմիջապես տուն մտնել, այլ կանգնեցին դռան մտ՝ լսելու, թե ինչ էին խոսում հայրը և մայրը:

Յերբ փայտահատը և իր կինը վերադարձան անտառից, մի հարձան, վորը վաղուց նրանցից փող եր պարտք վերցրել, վերադարձրեց: Այդ փողը կարող եր մի առ ժամանակ նրանց վրդկել սովամահ լինելուց:

Փայտահատն ուրախացավ և կնոջն անմիջապես ուղարկեց միս գնելու: Բայց վորովհետև նրանք վաղուց վոչինչ չէին կե-





րել, նա գնեց ավելի շատ միս, քան պետք էր յերկուսի համար:  
Յերբ վոր նրանք կշտացան, կինը հառաչեց և ասաց.  
— Ա՛խ, վորտեղ են հիմա մեր խեղճ յերեխաները: Ի՞նչպես  
նրանք մեզ հետ լավ կճաշէին: Յեւ ի՞նչպես դու սիրտ արիր քո  
հարազատներին կորցնելու: Յես քեզ չե՞յի ասում, վոր մենք հե-  
տո կզղջանք: Ի՞նչ են անում նրանք հիմա այդ խիտ անտառում:  
Ա՛խ, կարող ե պատահել, վոր գայլերը արդեն նրանց կերել են:  
Յեւ նա դառնությամբ լաց յեղավ: Փայտահատն ինքն ել  
չատ էր խղճում յերեխաներին, բայց չէր ցույց տալիս և համո-  
զում էր կնոջը մոռանալ նրանց:  
Իսկ փայտահատի կինը արտասուքից խեղդվում էր:  
— Ա՛խ, — լալով ասում էր նա, — վո՞րտեղ են հիմա իմ յե-  
րեխաները, վո՞րտեղ են իմ խեղճ յերեխաները...  
Լսելով այդ, յերեխաները չզիմացան և մի անգամից բղա-  
վեցին.  
— Մենք այտե՛ղ ենք, մենք այտե՛ղ ենք:  
Մայրը վրա հասավ, բաց արեց դուռը և գրկելով ու համ-  
բուրելով յերեխաներին ասաց.  
— Լո՛ւրջան ուրախ եմ, վոր դուք վերադարձաք, իմ սիրելի  
յերեխաներ: Դուք անպայման շատ հոգնած և քաղցած կլինեք:  
Յերեխաները նստեցին սեղանի շուրջը, սկսեցին ախորժա-  
կով ուտել և պամփել, թե վորքան էյին վախեցել անտառում և  
ինչպես Պատիկ-ձատիկը նրանց դուրս բերեց անտառից:  
Հայրը և մայրն ուրախացան իրենց յերեխաների վերադարձի  
համար, բայց այնքան ժամանակ, մինչև վոր փողը հատավ, հե-  
տո նրանք տխրեցին և վորոշեցին նորից տանել յերեխաներին,  
թողնել անտառը: Իսկ վորպեսզի յերեխաները նորից հետ չվե-  
րադառնան, ինչպես առաջին անգամ, նրանք վորոշեցին տանել  
նրանց ավելի հեռու:  
Ինչքան ել նրանք գաղտնի խոսեցին այդ մասին, Պատիկ-  
ձատիկը բոլորը լսեց: Նա շատ չվախեցավ, վորովհետև մտածեց  
յեղբայրներին այս անգամ տուն բերել այնպես, ինչպես առաջին  
անգամ: Թեև նա առավոտը շուտ վեր կացավ, բայց սպիտակ  
քար հավաքելը նրան չհաջողվեց, վորովհետև դուռը ամուր  
փակված էր:  
Պատիկ-ձատիկը չէր իմանում, թե ինչ անի: Բայց, յերբ  
մայրն առավոտյան յուրաքանչյուրին տվեց մի կտոր հաց, նա  
մտածեց, վոր քարերի փոխարեն կարող է գցել հացի փշրանք-  
ներ և այդ փշրանքներով գտնել տան ճանապարհը: Այդ պատ-  
ճառով նա չկերավ իր հացը և պահեց գրպանը:

Հայրն ու մայրը տարան նրանց ամենից անանցանելի, ամե-  
նից մուժ և ամենից խիտ անտառը: Յերբ նրանք հասան այն-  
տեղ, փայտահատն ու կինը պատվիրեցին յերեխաներին ցախ  
հավաքել, իսկ իրենք անմիջապես փախան:  
Յերբ Պատիկ-ձատիկը նկատեց, վոր ծնողները նորից թողին  
իրենց մենակ, սկսեց փնտռել հացի փշրանքները, վորպեսզի նը-  
րանց միջոցով գտնի տան ճանապարհը: Բայց վոչ մի տեղ չերե-  
վաց վոչ մի փշուր հաց. անտառի թռչունները կերել էյին:  
Ճանապարհը չգտնելով, յերեխաները լաց յեղան և գնա-  
ցին առանց իմանալու թե ուր:  
Վորքան քայլում էյին, նրանք ավելի շատ անտառի խոր-  
քերն էյին ընկնում և ավելի մոլորվում: Դեռ ճանապարհին  
էյին, յերբ գիշերը վրա հասավ և բարձրացավ ուժեղ քամի:  
Յերեխաները դողում էյին վախից և ցրտից: Նրանց թվում էր,  
վոր ամեն կողմից վրոճում են գայլերը և գալիս իրենց ուտե-  
լու: Նրանք չէյին համարձակվում խոսել և վոչ ել նայել իրենց  
շուրջը:  
Շուտով հորդ անձրև յեկավ և նրանց ամբողջովին թրջեց:  
Ամեն քայլափոխին նրանք սայթաքում էյին, ընկնում ցեխի  
մեջ և վեր էյին կենում ամբողջովին կեղտոտված, և մի քանի  
քայլից հետո, նորից էյին ընկնում փոսի մեջ:  
Վերջապես նրանք ընտրեցին մի հարթ տեղ և վորոշեցին  
քիչ հանդստանալ: Յեղբայրները նստեցին մի մեծ կոճղի վրա,  
իսկ Պատիկ-ձատիկը բարձրացավ մի ծառի ծայրը, նայելու, թե  
արդյոք չի՞ յերևում վորևէ ճանապարհ կամ տուն:  
Նայելիս, նա տեսավ հեռու մի փոքրիկ լույս: Պատիկ-  
ձատիկն իջավ ծառից և առաջնորդեց յեղբայրներին դեպի լույ-  
սը:  
Յերեխաները յերկար զնացին անտառով, շատ անգամ լույ-  
սը չբացավ նրանց աչքից: Վերջապես նրանք հասան այն տնա-  
կին, վորի լուսամուտից յերևում էր լույսը:  
Յերեխաները ծեծեցին դուռը: Նրանց աղմուկից յեկավ մի  
կին լապտերը ձեռքին և հարցրեց, թե ի՞նչ են ուզում:  
Պատիկ-ձատիկն ասաց, վոր ինքը և իր յեղբայրները մոլոր-  
վել են անտառում և խնդրում են, վոր գիշերելու տեղ տան  
իրենց այդ տանը:  
Կինը, տեսնելով, թե վորքան լավիկներն են, լաց յեղավ և  
ասաց.





— Ա՛խ, խեղճ յերեխաներ, այս վո՞րտեղ եք դուք հասել: Սակայն գիտե՞ք, այստեղ ապրում ե Մարդակերը, վոր ուտում ե փոքր յերեխաներին:

— Ի՞նչ անենք, — պատասխանեց Պատիկ-Ճասիկը, դողալով վախից այնպես, ինչպես իր յեղբայրները: — Յեթե դուք մեզ չընդունեք, միենույնն ե մեզ դայլերը կուտեն անտառում: Ավելի լավ ե ուրեմն, վոր մեզ ուտի ձեր մարդը: Գուցե և նա խղճա մեզ, յեթե դուք նրան շատ խնդրեք:

Մարդակերի կինը, կարծելով թե կարող ե թաղցնել յերեխաներին մինչև առավոտ, ներս ընդունեց նրանց և տարավ տաքացնելու կրակի մոտ, վորի վրա խորովում եր մի ամբողջ վոջխար՝ Մարդակերի ընթրիքի համար:

Հագիլ յերեխաներն սկսեցին տաքանալ, լսեցին դռան ուժեղ հարվածներ. այդ Մարդակերն եր տուն վերադառնում: Կինն անմիջապես թաղցրեց յերեխաներին մահճակալի տակ և զնաց դուռը բաց արեց:

Մարդակերը ներս մտնելով, հարցրեց, թե պատրաստ ե ընթրիքը և բերե՞լ են գինին: Կինը նստեցրեց Մարդակերին սեղանի մոտ և գրեց նրա առջև մի ասագին կժով գինի և մի ամբողջ վոջխար: Վոջխարը դեռ լավ չեր խորովվել և նրանից արյուն եր կաթում, բայց Մարդակերին այդպես ավելի դուր եր դալիս: Նա արագ լափեց վոջխարը՝ վոսկորներով միասին և մի անգամից խմեց գինին:

Հանկարծ Մարդակերն սկսեց գլուխը դարձնել դեպի աջ և դեպի ձախ, հոտտեց և սասաց.

— Յես մարդու մսի հոտ եմ առնում:

— Ի՞նչ ես ասում. մեզ վո՞րտեղից մարդու միս, — պատասխանեց կինը: — Այդ պետք ե լինի հորթի մսի հոտը: Նրա կաշին քիչ առաջ հանեցի:

— Քեզ ասում եմ, թե մարդու մսի հոտ եմ առնում, — բըղավեց Մարդակերը և բռունցքով այնպես խփեց սեղանին, վոր պնակները վեր թռան մինչև առաստաղը:

Հետո նա վեր կացավ և ուղիղ զնաց մահճակալի մոտ:

— Ա՛յ, — գոռաց նա, տեսնելով յերեխաներին: — Ահա թե դու ինձ ի՞նչպես ես խորում: Այդպիսի խարերայության համար նույնիսկ քեզ ել պետք ե ուտել:

Յեվ մեկիկ-մեկիկ նա դուրս հանեց յերեխաներին մահճակալի տակից:

Սեղճ յերեխաները ծունկ չռքած խնդրում եյին Մարդակե-



րին, վոր իրենց չսպանի: Բայց խեղճերը ընկել եյին ամենից անգուլթ մարդակերի ձեռքը: Նա յերբեք չխղճաց և ասաց, վոր անսպասման կուտի նրանց: Այդ ասելով, նա բռնեց տղաներից մեկի վտաքից և արդեն ուզում եր մորթել նրան:

— Ախար ինչո՞ւ յես այդպես շտապում, — ասաց նրան կինը: — Չե վոր դեռ մի ամբողջ կուլտ միս ունենք, տե՛ս, ահա մի հորթ, յերկու վոչխար, խոզի կեսը...

— Դե, լավ, — ասաց Մարդակերը: — Կսպասեմ մինչև վաղը: Իսկ այժմ յերեսաներին լավ կերակրիր, վորպեսզի նրանք չնիհարեն և տար պառկեցրու:

Բարի կինն ուրախացավ, վոր Մարդակերը չվնասեց յերեսաներին, և բերեց նրանց լավ ընթրիք, բայց տղաները վախից վոչինչ չկարողացան ուտել:

Իսկ Մարդակերը նորից սկսեց խմել գինին. նա ուրախ եր, վոր ուներ այդպիսի հիանալի նախաճաշիկ: Նա խմեց մի կուժ լիքը գինի և իսկույն պառկեց քնելու:

Մարդակերն ուներ յոթն աղջիկ: Այդ աղջիկները շատ չար և ազեղ եյին: Թեև նրանք դեռ շատ փոքր եյին, բայց մարդու միս եյին ուտում այնպես, ինչպես իրենց հայրը:

Այդ յերեկո նրանց շուտ եյին պառկեցրել քնելու: Մարդակերի աղջիկները բոլորն ել պառկել եյին մի մեծ մահճակալի վրա և նրանցից ամեն մեկը գլխին ուներ վոսկե պսակ:

Նույն սենյակում կար ճիշտ այդ մեծության մի ուրիշ մահճակալ: Այդ մահճակալի վրա Մարդակերի կինը պառկեցրեց տղաներին և հետո ինքը գնաց քնելու:

Պատիկ-ձստիկը նկատեց, վոր Մարդակերի աղջիկների գլուխին վոսկե պսակներ կային: Վախենալով, թե գիշերը Մարդակերը կմորթի իրենց, Պատիկ-ձստիկը կամաց վեր կացավ և հանեց իր և իր յեղբայրների գլխարկները: Հետո նա զգուշությամբ հանեց փոքրիկ մարդակերների վոսկե պսակները և դրեց գլխարկները նրանց գլխին, իսկ իր և յեղբայրների գլխին— վոսկե պսակները: Այդ արեց նրա համար, վորպեսզի Մարդակերն ընդունի տղաներին իր աղջիկների տեղ, իսկ աղջիկներին— տղաների տեղ, վորոնց նա ուզում եր մորթել:

Ամեն ինչ պատահեց այնպես, ինչպես մտածել եր Պատիկ-ձստիկը: Կես գիշերին Մարդակերը զարթնեց, արագ վեր կացավ, վերցրեց մեծ դանակը, կամացուկ մտավ իր աղջիկների սենյակը և մոտեցավ այն մահճակալին, վորի վրա պառկել եյին տղաները: Նրանք բոլորը քնել եյին, բացի Պատիկ-ձստիկից:





Նա շատ վախեցավ, յերբ Մարդակերը իր յեղբայրներէ գլուխները շոշափելուց հետո, սկսեց շոշափել նաև իր գլուխը:

Շոշափելով վոսկե պսակները, Մարդակերն ասաց.

— Ա՛յ, քիչ եր մնում, վոր յես մորթեյի իմ աղջիկներին: Յերեվի, յերեկ յես չափից ավելի գինի յեմ խմել:

Հետո նա գնաց փոքրիկ մարդակերների մահճակալի մոտ և շոշափելով տղաների գլխարկները, ասաց.

— Ահա թե վորտեղ են պառկել տղաները:

Այդ ասելով, նա, առանց մտածելու, մորթեց իր բոլոր աղջիկներին և նորից գնաց քնեց:

Հենց վոր Պատիկ-ձստիկը լսեց Մարդակերի գնալը, անմիջապէս դարթեցրեց իր յեղբայրներին, հրամայեց նրանց անմիջապէս հաղնվել և հեռուել իրեն: Նրանք կամացուկ իջան պարտեզը և ցատկեցին պարիսպի վրայից: Պարիսպն անցնելուց հետո, նրանք թողին և փախան:

Ամբողջ գիշեր տղաները վազեցին, չիմանալով թե ուր: Իսկ Մարդակերը, առաւոտյան դարթնելով, ասաց իր կնիւնջը.

— Գնա՛ վերև և հավաքիր յերեկ յերեկոյան չարածճիներին:

Կինը շատ զարմացավ Մարդակերի բարության վրա: Նա կարծեց, վոր ամուսինը հրամայեց հազցնել տղաներին:

Նա բարձրացավ վերև և տեսնելով իր բոլոր աղջիկներին մորթված, ուշաթափված ընկավ հատակի վրա:

«Ի՞նչու համար նա այսքան ժամանակ չի վերադառնում» — մտածեց Մարդակերը և ինքն ել գնաց վերև:

Յերբ տեսավ իր աղջիկներին մորթված, նա վշտից սկսեց իր մազերը պոկել:

— Ա՛խ, ի՞նչ արի յես, — աղաղակեց նա: — Այս բոլորը տղաները սարքեցին, բայց անզգամները դրա համար պիտի հատուցեն և շատ շուտով:

Մարդակերը մի աման ջուր լցրեց իր կնիւնջ ջրի մեջ և յերբ նա ուշքի յեկավ, ասաց նրան.

— Շուտ տուր ինձ իմ արագավազ կոշիկները, յես գնում եմ տղաներին բռնելու:

Մարդակերը, հագնելով կոշիկները, ընկավ յերեխաների հետևից և ամեն կողմ վազելուց հետո, վերջապէս գտավ նրանց հետքը:

Յերեխաները տեսան Մարդակերին, վոր մի սարից մյուս





սարը անցնում եր մի քայլով, իսկ մեծ գետերը՝ այնքան հեշտ, վորքան փոքր առվակները:

Նրանք սկսեցին տեղ փնտռել թագնվելու համար:

Պատիկ-ձստիկը նկատեց վոչ հեռու ժայռի մեջ մի քարայր և իր յեղբայրներին հետ թագնվեց այնտեղ:

Մարդակերը հոգնեց՝ յերկար հետապնդելուց: Նա ուզեց հանգստանալ հենց այն ժայռի վրա, վորի տակ թագնվել էին տղաները:

Նա իսկույն և յեթ նիրհեց և սկսեց այնպես սարսափելի խամփացնել, վոր յերեխաները վախից չորացան:

Բայց Պատիկ-ձստիկը իրեն չկորցրեց: Նա պատվերեց յեղբայրներին՝ քանի Մարդակերը քնել է՝ շտապ տուն փախչել, իսկ իր մասին յերբեք չանհանգստանալ: Յեղբայրները լսեցին նրան, դուրս յեկան քարայրից, վազեցին վորքան ուշ ունեյին և տուն հասան:

Իսկ Պատիկ-ձստիկը մոտեցավ Մարդակերին, զգուշությամբ հանեց նրա արագավազ կոշիկները և ինքը հագավ:

Արագավազ կոշիկները շատ մեծ էին և շատ լայն: Բայց վորովհետև նրանք կախարդական կոշիկներ էին, կարող էին թե՛ մեծանալ և թե՛ փոքրանալ: Յերբ Պատիկ-ձստիկը հագավ, նրանք այնպես հարմարվեցին, վոր կարծես թե նրա համար եյին կարել:

Հագնելով արագավազ կոշիկները, Պատիկ-ձստիկը կրկին զգուշությամբ մոտեցավ քնած Մարդակերին, հանեց նրա գրքուպանից տուրակով վոսկին և վազեց տուն: Յեղբայրները արդեն տանն էին և մեծ ուրախությամբ դիմավորեցին նրան:

Ստանալով Մարդակերի փողը, փայտահատն ապրեց հոխ և այլևս իր յերեխաներին չտարավ անտառ:

## ԿԱԽԱՐԴՈՒՅԻՆ

Շատ վաղուց կար գոռոզ և շար մի կին: Նա ուներ յերկու աղջիկ: Մեծը նման էր մորը թե՛ դեմքով և թե՛ բնավորությամբ: Փոքրը, ընդհակառակը, նմանվում էր հորը—բարի յեր և պարկեշտ: Բացի դրանից նա արտասովոր գեղեցիկուհի յեր:

Մայրը չափազանց սիրում էր մեծ աղջկան և ատում փոքրին: Նա խնամք էր տանում մեծին, վորպես նշանավոր իշխանուհու, իսկ փոքրին՝ ստիպում էր աշխատել առավոտից մինչև յերեկո և նույնիսկ հրամայում էր նրան ճաշել խոհանոցում:

Փոքր աղջիկը պարտավոր էր որը յերկու անգամ գնալ ջրի՝ տանից շատ հեռու և բերել մեծ, ծանր կժով լիքը ջուր: Մի անգամ, յերբ նա ջրհոր էր գնացել, նրան մոտեցավ խեղճ հագնված մի պառավ կին և ջուր խնդրեց:

Աղջիկը վոզողեց կուժը, հորից ջուր քաշեց և սիրով տվեց նրան: Ջուրը խմելուց հետո պառավն ասաց.

— Իու շատ բարի և պարկեշտ աղջիկ ես: Գո բարության և պարկեշտության համար յես քեզ նվեր կտամ:

Այդ պառավը կախարդուհի յեր: Նա հագել էր մուրացկանի պես, վորպեսզի իմանար, թե վորքա՞ն ջահել աղջիկը բարի յեր դեպի աղքատ մարդիկ:

— Ահա իմ նվերը, — շարունակեց նա, — այս բոպեյից սկսած, ամեն անգամ, յերբ դու խոսք արտասանես, քո բերանից պիտի թափվեն ծաղիկներ և թանգազին քարեր:

Այս ասելով պառավն անհետացավ, իսկ աղջիկը՝ ջուրը լցրեց և վերադարձավ:





Յերբ նա տուն հասավ՝ մայրն սկսեց հանդիմանել նրան, այդպես ուշ վերադառնալու համար:

— Ներեցեք ինձ, մայրիկ, վոր յես այսպես ուշացա, — պատասխանեց աղջիկը, և հենց այդտեղ նրա բերանից ընկան յերկու վարդ, յերկու մարդարիտ և յերկու խոշոր աղամանդ:

— Այդ ի՞նչ է, — զարմացած կանչեց մայրը: — Քո բերանից ընկնում են մարդարիտ և աղամանդ: Այդ ի՞նչ է նշանակում:

Չահել աղջիկը բուրբ պատմեց նրան, և ամեն մի խոսքի հետ նրա բերանից թափվեցին վարդեր և աղամանդներ:

— Ահա թե ինչ, — ասաց մայրը: — Դե՛, այն ժամանակ պետք է ուղարկել այդ ջրհորը նաև թո մեծ քրոջը: Արի այստեղ, աղջիկս, նայիր, ի՞նչ է ընկնում թո քրոջ բերանից, յերբ նա խոսում է: Անպայման դու ել կուզես ստանալ կախարդից այսպիսի նվեր: Դրա համար միայն հարկավոր է գնալ ջրհորը՝ ջուր բերելու, և յերբ աղքատ հագնված կինը քեզանից ջուր խնդրի, քաղաքավարի կերպով տուր նրան կուժը:

— Շատ հարկավոր է, վոր յես ջրի գնամ, — պատասխանեց նա կուպիտ:

— Յես հրամայում եմ քեզ գնալ այնտեղ, — բղավեց մայրը: — Գնա՛ այս բուպեյիս:

Ծուլլը վերցրեց տան ամենից գեղեցիկ արծաթե սափորը և գնաց ջրհորը, շարունակելով մրթմրթալ:

Նա դեռ չէր մոտեցել ջրհորին, յերբ տեսավ լավ հագնված մի գեղեցկուհու: Գեղեցկուհին մոտեցավ նրան և ջուր խնդրեց: Այդ, նույն կախարդուհին էր, վորը յերևացել էր նրա քրոջը: Այս անգամ նա հագնվել էր իշխանուհու պես, վորպեսզի իմանար նաև այս աղջկա բնավորութունը:

— Միթե՞ յես այստեղ յեկա, վոր ձեզ ջուր տամ, — ասաց նրան կուպիտ աղջիկը: — Յերևի դուք կարծում եք, վոր այս արծաթ սափորը յես ձեզ համար եմ բերել: Ի՞նչպես չէ: Յեթե ուզում եք խմել, լվացեք ձեռներդ և խմեցեք:

— Դու շատ կուպիտ ես, — ասաց կախարդուհին: — Քո կուպտոթյան համար դու ինձանից նվեր կստանաս. ամեն անգամ, յերբ դու վորևե խոսք ասես, թո բերանից պիտի ընկնեն ոճ, գորտ կամ մուկ:

Այս ասելով, կախարդուհին արագ հեռացավ, իսկ աղջիկը յետ յեկավ առանց շտապելու:



Մայրը համբերութիւն չունեցավ սպասելու իր սիրելի աղ-  
ջրկան և գնաց նրան դիմաւորելու:

Հենց վոր մայրը տեսավ իր սիրած աղջկան, կանչեց.

— Հ'ը, ի՞նչպէս ե, աղջիկս: Վո՞նց են գործերդ:

— Հ'ը, ի՞նչպէս ե, մայրիկս: Վո՞նց են գործերդ, — ծաղ-  
րեց նրան աղջիկը, և այդ բոլորին նրա բերանից ընկան ոճեր և  
գորտեր:

— Այս ի՞նչ ե, — սարսափից բղավեց մայրը: — Այդ՝ ան-  
պայման ք" քրոջ խորամանկութիւնն ե... Դե լավ, դրա հա-  
մար նա կստանա:

Յեւ նա հարձակվեց փոքր աղջկա վրա, վոր ծեծի նրան:  
Խեղճը փախավ և թագնվեց մոտիկ անտառում:

Այստեղ նրան տեսավ յերիտասարդ մի իշխան, վորը վոր-  
սից եր վերադառնում: Հրապուրված նրա գեղեցկութիւնից,  
նա հարցրեց, թե մենակ ի՞նչ ե անում անտառում և ինչո՞ւ յի  
այդպէս դառն լաց լինում:

— Ա՛խ, մայրս ինձ վռնդել ե տնից, — ասաց աղջիկը և այդ  
խոսքի վրա նրա բերանից ընկան հինգ կամ վեց մարգարիտ և  
նույնքան ել ազամանդ:

Իշխանը շատ զարմացավ: Նա խնդրեց աղջկան պատմել,  
թե ինչո՞ւ նրա բերանից ընկնում են ազամանդ և մարգարիտ:

Աղջիկը պատմեց նրան բոլոր պատահածները: Իշխանը  
հենց այդտեղ սիրահարվեց աղջկա վրա, տարավ նրան պալատ  
և ամուսնացավ նրա հետ:

Իսկ նրա քույրը բոլորին զգվելի դարձավ իր ոճերով և գոր-  
տերով, այն աստիճան, վոր մինչև անգամ հարազատ մայրը  
նրան վռնդեց իր մոտից:

## ՄՈՒՐԱՏԻՏԻԿԸ

Ժամանակով ապրում եր մի մարդ: Նրա կինը մեռնում ե.  
մնում են ինքը և իր աղջիկը: Շուտով նա յերկրորդ անգամ ե  
ամուսնանում աշխարհի ամենագոռոզ և կովարար կնոջ հետ:  
Այդ կինը այրի յեր և ուներ յերկու աղջիկ առաջին ամուսնուց:  
Աղջիկներն ամեն բանով նման եյին իրենց մորը:

Առաջին իսկ որից խորթ մայրն սկսեց վերաւորել աղջկան:  
Նրան վատ եր հագցնում ու կերակրում և ստիպում եր ամեն  
տեսակ ծանր աշխատանքներ կատարել: Աղջիկը թե՛ հատակն եր  
մաքրում, թե՛ ամանները լվանում և թե՛ լվացքն եր անում: Քը-  
նում եր նա չարդախում, կտուրի տակ հատակին, ծղոտն ան-  
կողնում, իսկ նրա քույրերն ապրում եյին տաք, լուսավոր սեն-  
յակներում և քնում եյին մաքուր, փափուկ անկողիններում,  
մետաքսե վերմակների տակ:

Գործը վերջացնելուց հետո՝ խեղճ աղջիկը նստում եր ու-  
ճախի անկյունը, մոխրի արկղի մոտ: Դրա համար ել նրա խորթ  
մայրն ու քույրերը անվանում եյին նրան Մոխրատիտիկ:

Մոխրատիտիկը համբերութեամբ տանում եր բոլոր վերա-  
վորանքները և յերբեք չեր դանդատվում հորը: Իսկ նրա հայ-  
րը, միևնույն ե, չեր կարող լսել նրան, վորովհետեւ վախենում  
եր իր կովարար կնոջից:

Մի անգամ թագաւորի տղան պարահանդես սարքեց և հրա-  
վիրեց բոլոր բարձրաստիճան մարդկանց: Մոխրատիտիկի քույ-  
րերը նույնպէս հրավեր ստացան: Նրանք շատ ուրախացան և  
սկսեցին պատրաստվել պարահանդեսի: Այդ պատճառով՝ ել



ավելի շատացավ Մոխրատիտիկի աշխատանքը. նա պետք է առավոտից մինչև գիշեր մաքրեր և հարթուկեր նրանց շորերը:

Այդ ուրերին՝ տանը՝ ամբողջ ժամանակ խոսում էյին միայն զարդարվելու մասին: Քույրերը շարունակ պտտվում էյին հայելիների առաջ, ընտրում և հարմարեցնում շորերը:

— Յես, — ասում էր մեծ քույրը, — կգնամ պարահանդես ժանյակավոր կարմիր թավիշ շորով:

— Իսկ յես, — ասում էր փոքրը, — կհագնեմ սև մետաքսե շոր՝ վոսկեղույն ծաղիկներով և կվերցնեմ աղամանդյա մանյակը:

Քույրերը կանչեցին Մոխրատիտիկին և սկսեցին խորհրդակցել նրա հետ, թե ինչպե՛ս ավելի լավ զարդարվեն: Մոխրատիտիկը նրանց խելացի խորհուրդներ տվեց և նույնիսկ առաջարկեց քույրերին սանրել նրանց մազերը, վորին նրանք հոժարությամբ համաձայնվեցին:

Յերբ Մոխրատիտիկը սանրում էր քույրերի մազերը, նրանք ասացին նրան.

— Ի՞նչ է, Մոխրատիտիկ, դո՛ւ էլ ես ուզում պարահանդես գնալ:

— Ա՛խ, քույրեր, դուք բոլորդ ծիծաղում եք ինձ վրա: Պարահանդեսն իմ ինչ բանն է:

— Հը՛-հը՛-հը՛ — ծիծաղեցին քույրերը, — շատ զվարճալի կլիներ, յեթե Մոխրատիտիկը պարահանդես դար իր կեղտոտ շորերով:

Յեթե ուրիշը լիներ, այդ խոսքերի վրա կխառներ նրանց մազերը, բայց Մոխրատիտիկը չբարկացավ և հիանալի սանրեց:

Վերջապես քույրերը կռուք նստեցին և դնացին: Մոխրատիտիկը յերկար նայեց նրանց հետևից, իսկ հետո սկսեց լաց լինել:

Այդ ժամանակ յեկավ նրա պառավ մորաքույրը: Պետք է ասել, վոր այդ մորաքույրը բարի կախարդուհի յեր:

Կախարդուհին հարցրեց Մոխրատիտիկին, թե ինչո՞ւ յե լաց լինում:

— Յես ուզում եյի... յես ուզում եյի... — ասաց Մոխրատիտիկը, բայց այդ ժամանակ այնպես ուժեղ լաց յեղավ, վոր չէրողացավ այլևս խոսել:

— Դու ուզում եյիր գնալ պարահանդես, — հարցրեց կախարդուհին:

— Շատ եյի ուզում, — պատասխանեց Մոխրատիտիկը:





— Լավ, — ասաց կախարդուհին: — Յեթե դու խելոք աղ-  
ջիկ պիտի լինես, յես սիրով կկատարեմ քո ցանկությունը:  
Գնա՛ պարտեզ և բեր մի դդում:

Մոխրատիտիկին իսկույն վազեց պարտեզ, քաղեց իր գտած  
ամենամեծ դդումը և բերեց կախարդուհուն:

Կախարդուհին փորեց դդումը և նրան մի քանի հարված  
տվեց իր կախարդական փայտիկով: Դդումն իսկույն դարձավ  
մի գեղեցիկ և վոսկեզոծ կառք:

Հետո կախարդուհին գնաց նայելու մկան թակարդը: Այն-  
տեղ կային վեց կենդանի մկներ:

Կախարդուհին հրամայեց Մոխրատիտիկին բաց անել թա-  
կարդի դռնակը. յուրաքանչյուր մկան, վոր այնտեղից դուրս  
եր ցատկում, նա խփում եր իր կախարդական փայտիկով, և  
մուկն անմիջապես փոխվում եր հիանալի ձիու: Մի բոպեյից  
հետո՝ մկները փոխարեն կանգնեցին վեց մկնագույն գեղեցիկ  
ձիեր:

Այժմ պակասում եր միայն կառապանը:

— Սպասեցե՛ք, — ասաց Մոխրատիտիկը, — յես գնամ տես-  
նեմ առնետ չկա՞ թակարդում: Նրան ել դուք կգարձնեք կառա-  
պան:

— Լավ, — պատասխանեց կախարդուհին, — բեր այտեղ  
առնետի թակարդը:

Մոխրատիտիկը բերեց առնետի թակարդը, վորի մեջ նըս-  
տել եյին յերեք խոչոր առնետ:

Կախարդուհին ընտրեց այն առնետին, վոր ուներ յերկար  
բեխեր և խիեց նրան կախարդական փայտիկով. առնետը դար-  
ձավ յերկար բեխերով մի խոչոր կառապան:

Հետո նա ասաց Մոխրատիտիկին.

— Գնա՛ պարտեզ, գտի՛ր վեց մողես և բե՛ր նրանց այտեղ:

Մոխրատիտիկը հենց վոր բերեց մողեսները, կախարդու-  
հին փոխեց նրանց վեց ծառաների: Ծառաները բարձրացան  
անմիջապես կառքի հետևի մասը և այնպես կանգնեցին, վոր  
կարծեք իրենց ամբողջ կյանքում այդ գործով եյին զբաղվել:

Այդ բոլորն անելուց հետո կախարդուհին ասաց Մոխրա-  
տիտիկին.

— Ահա քեզ կառք, վոր գնաս պարահանդես: Հիմա  
ուրա՞խ ես:

— Շա՛տ, շա՛տ ուրախ եմ, — պատասխանեց Մոխրատիտի-  
կը: — Բայց ի՞նչպես գնամ այտեղ այս պատառոտված, կեղտոռ  
չորերով:

Կախարդուհին խիեց Մոխրատիտիկին իր փայտիկով և այդ  
խիկ բոպեյին նրա կեղտոտ շորերը փոխվեցին վոսկե և արծաթե  
չքեղ շորերի: Հետո կախարդուհին տվեց Մոխրատիտիկին մի  
դույզ բյուրեղյա կոչիկ:

Հագնելով կոչիկները Մոխրատիտիկը նստեց կառքը: Հրա-  
ժեշտ տալու ժամանակ, կախարդուհին խիստ պատվիրեց նրան,  
վոր պարահանդեսում մնա մինչև կես գիշեր, վոչ ուշ:

— Յեթե դու այնտեղ մնաս թեկուզ մի բոպե ավելի, — աս-  
աց նա, — քո կառքը կգառնա նորից գգում, ձիերը — մկներ,  
ծառաները — մողեսներ, կառապանը — մեծ առնետ, իսկ շորերդ  
կլինեն առաջվա պես պատռված և կեղտոտ:

Մոխրատիտիկը խոստացավ տուն վերադառնալ պարահան-  
դեսից կես գիշերից առաջ և գնաց՝ ուրախությունից իրեն  
կորցրած:

Յերբ Մոխրատիտիկը յեկավ պալատ, թագավորի տղային  
հայտնեցին, վոր պարահանդես է յեկել բոլորովին անհայտ մի  
ջահել իշխանուհի: Թագավորի տղան շտապեց նրան գիմավորե-  
լու, ոգնեց կառքից իջնելու և առաջնորդեց դահլիճը:

Մոխրատիտիկի յերեվալուն պես դահլիճում լուսթյուն տի-  
րեց. հյուրերը դադարեցին պարելուց, յերաժիշտները՝ նվագե-  
լուց — բոլորը նայեցին անծանոթ գեղեցկուհուն:

— Ա՛խ, ինչպե՛ս գեղեցիկ է նա: Ա՛խ, ինչպե՛ս վայելչա-  
կազմ է, — լսվեցին ամեն կողմից:

Բոլոր կանայք ուշադրությամբ նայում եյին նրա մազերի  
սանրվածքին, շորերին ու վճռում եյին հաջորդ որվանից իսկ  
իրենց շորերը կարել տալ իշխանուհու հագած շորերի նման, յե-  
թե միայն հաջողվեր գտնել այդպիսի սպրանք և այնպես փորձ-  
ված վարպետ դերձակ:

Թագավորի տղան նստեցրեց Մոխրատիտիկին ամենապատ-  
վաժոր տեղը: Յերբ սկսվեց պարը, նա հրավիրեց նորեկ հյու-  
րին պարելու: Մոխրատիտիկը պարեց այնքան չնորհքով, վոր  
հյուրերն ավելի ևս զարմացան և սքանչացան նրա վրա:

Պարից հետո տվին հիանալի ընթրիք, բայց թագավորի  
տղան վոչինչ չկերավ, նա միայն նայում եր անծանոթ գեղեց-  
կուհուն և միայն մտածում նրա մասին:

Իսկ Մոխրատիտիկը գնաց նստեց իր քույրերի կողքին և  
չատ սիրալիր խոսեց նրանց հետ. նա նույնիսկ հյուրասիրեց  
նրանց թագավորի տղայի ընծայած նարինջներով և խնձոր-  
ներով:





Հանկարծ Մոխրատիտիկը լսեց, վոր ժամը հնչում է տասնութեկն անց քառասունհինգ րոպե: Նա այն ժամանակ բոլոր հյուրերին հարգանքով հրաժեշտ տվեց և հեռացավ այնքան արագ, վորքան կարող էր:

Մոխրատիտիկը տուն վերադառնալով շնորհակալություն հայտնեց կախարդուհուն և ասաց, վոր ցանկանում է վաղն ել գնալ պարահանդես:

Այն ժամանակ, յերբ նա պատմում էր կախարդուհուն այն բոլորի մասին, վոր նա տեսել էր պալատում, քույրերը վերադարձան պարահանդեսից: Մոխրատիտիկը գնաց դուռը բանալու:

— Ի՞նչքան ուշ վերադարձաք, — ասաց նա տրորելով աչքերը, և ձեմացնելով, թե նոր է զարթնել: Այն ինչ նրա քույրը իսկի ել չէր տանում:

— Յեթե դու լինեիր այդ սքանչելի պարահանդեսում, — ասաց նրան փոքր քույրը, — դու չեիր տիրի. պարահանդես էր յեկել այնպիսի գեղեցիկ մի իշխանուհի, վորի նմանը վոչ վոք դեռ չի տեսել: Նա շատ բարի յեր և հյուրասիրեց մեզ հիանալի նարինջներով ու խնձորներով:

Մոխրատիտիկը դո՛հ էր քույրերի գովասանքից: Նա հարցրեց այդ իշխանուհու անունը, բայց նրանք ասացին, վոր այլ վոչ վոք չգիտե:

— Թագավորի ջահել տղան, — ավելացրին քույրերը, — ասաց, վոր աշխարհում ուրիշ բան չի ցանկանում, միայն թե իմանար ո՞վ է այդ իշխանուհին:

Մոխրատիտիկը ժպտաց և ասաց.

— Ա՛խ, քույրեկներ, ինչքա՛ն բախտավոր եք դուք: Չի՞ պարելի վոր յես ել տեսնեմ այդ գեղեցիկ իշխանուհուն: Սիրելի քույրեկ, տվե՛ք ինձ ձեր գեղին շորը, վոր դուք հագնում եք ամեն օր: Յես նրանով կգնամ պարահանդես:

— Ահա ինչ, — բարկացած պատասխանեց մեծ քույրը: — Տա՛լ իմ շորն այնպիսի կեղտոտի: Յես դժվե՞լ եմ, ինչ է:

Մոխրատիտիկն այնքան ել չվշտացավ այդ մերժումից: Նա գիտե՞ր, վոր կախարդուհուց կստանա այնպիսի շորեր, վորոնց նմանը քույրերը յերազում ել յերբեք չեյին տեսել:

Հաջորդ օրը նրա քույրերը դարձյալ գնացին պարահանդես: Մոխրատիտիկը նույնպես գնաց: Այս անգամ նա ավելի լավ էր պարզարված:

Թագավորի տղան չէր հեռանում նրանից նույնիսկ մի րոպե և ամբողջ ժամանակ խոսում էր նրա հետ:



Մոխրատիտիկը զվարճացավ, պաքեց և բոլորովին մոռացավ կախարդուհու պատվերը: Նրան թվում էր, վոր ժամը տանըմեկն էլ չկա, յերբ վոր հանկարծ հնչեց կես գիշերվա առաջին հարվածը: Լսելով ժամացույցի հնչյունը, նա վեր թռավ և շտապ փախավ:

Փախչելիս Մոխրատիտիկը գցեց վոտից բյուրեղյա կոշիկներից մեկը: Թագավորի տղան վերցրեց այն և շտապ իշխանուհու հետևից վազեց:

Նա վազեց մինչև դարպաս և հարցրեց պահակներին, թե չեն տեսել իշխանուհուն: Պահակներն ասացին, վոր տեսել են ինչ վոր վատ հագնված աղջկա. նա ավելի նման էր մի գեղջկուհու, քան թե իշխանուհու:

Թագավորի տղան, վոչինչ չխմանալով, տխուր վերադարձավ պալատ, մտածելով, թե ինչպես գտնի անհայտացած իշխանուհուն:

Իսկ Մոխրատիտիկը հասավ տուն հեի՛հե, առանց կռքի, առանց ծառայի, իր հին, կեղտոտ շորերով: Բոլոր զարդարանքներից նրան մնացել էր միայն մի կենտ բյուրեղյա կոշիկ:

Յերբ քույրերը վերադարձան տուն, Մոխրատիտիկը հարցրեց, թե նրանք լավ զվարճացա՞ն պարահանդեսում, իսկ անհայտ գեղեցկուհին նորից յեկե՞լ էր:

Քույրերը պատասխանեցին, վոր գեղեցկուհին յեկել էր, բայց կես գիշերին շտապ փախավ, գցելով վոտքից աշխարհի ամենագեղեցիկ բյուրեղյա կոշիկներից մեկը:

— Թագավորի տղան վերցնելով այդ կոշիկը, — ասացին քույրերը, — ամբողջ ժամանակ նայում էր նրան: Նա, անպայման սիրահարվել է այդ գեղեցկուհուն:

Քույրերը չսխալվեցին: Թագավորի տղան իսկապես վոր սիրահարվել էր անհայտ գեղեցկուհուն: Մի քանի օրից հետո նա հրամայեց հնչեցնել փողերը և հայտարարել, վոր կամուսնանա այն աղջկա հետ, վորի վոտքին հարմարվի բյուրեղյա կոշիկը:

Պալատականներն սկսեցին ման գալ քաղաքում և փորձել կոշիկը բոլոր ջահել աղջիկների վոտքին:

Նրանք յեկան նաև Մոխրատիտիկի քույրերի մոտ: Սրանցից յուրաքանչյուրը շատ աշխատեց մտցնել վոտքը կոշիկի մեջ, բայց թե՛ մեկի և թե՛ մյուսի վոտքերը շատ մեծ էյին, ուստի չհաջողվեց:

Մոխրատիտիկն էլ այդ սենյակում էր:

— Տվե՛ք յես էլ փորձեմ այդ կոշիկը, — հանկարծ ասաց նա, — չե՞՞ր գալիս արդյոք իմ վոտքին:

Քույրերն սկսեցին ծիծաղել նրա վրա:

Բայց պալատականը նստեցրեց Մոխրատիտիկին աթոռի վրա և փորձեց կոշիկը նրա վոտքին: Վոտքը մտավ կոշիկի մեջ առանց վորևէ դժվարության:

Քույրերը շատ զարմացան: Բայց ավելի մեծ յեղավ նրանց զարմանքը այն ժամանակ, յերբ Մոխրատիտիկը հանեց զբաշխից յերկրորդ կոշիկը և հագավ մյուս վոտքին:

Այդ ժամանակ վրա հասավ կախարդուհին: Նա իր կախարդական փայտիկով խփեց Մոխրատիտիկի շորին և դարձրեց նրան ավելի չքեղ, քան նախորդները:

Այդ ժամանակ քույրերը հասկացան, թե Մոխրատիտիկն էր այն գեղեցկուհին, վորը յերկու անգամ յեկել էր պարահանդես: Նրանք ընկան նրա վոտքերը և ներողություն խնդրեցին այն բոլոր վատ վերաբերմունքի համար, վորով տանջել էյին նրան:

Մոխրատիտիկը վեր հանեց քույրերին և, գրկելով, ասաց, վոր յերբեք չի բարկացել նրանց վրա:

Դրանից հետո նրան տարան պալատ:

Հաջորդ օրն իսկ թագավորի տղան ամուսնացավ Մոխրատիտիկի հետ և ուրախ ու ճոխ հարսանիք սարքեց:



## ՌԻԿԵ-ՓՈՒՓՈՒՇԻԿԸ

Շատ տարի սրանից առաջ ապրում էյին մի թագավոր և մի թագուհի: Նրանք ունեցան մի այնպիսի այլանդակ յերեխա, վոր տեսնողները կասկածում էյին յերկար ժամանակ, թե արդյոք նա մարդ է, թե վոչ: Թագուհին—մայրը շատ էր մշտացել էր վորդու այլանդակության համար, հաճախ լաց էր լինում նրա վրա նայելով:

Մի անգամ, յերբ նա նստել էր նորածնի օրորոցի մոտ, սենյակում հայտնվեց մի բարի կախարդուհի: Նա նայեց այլանդակ յերեխային և ասաց.

— Այդքան շատ մի վշտանաք, թագուհի. ճիշտ է, տղան շատ այլանդակ է, բայց այդ բոլորովին չի խանգարում, վոր նա լինի բարի և գրավիչ: Բացի դրանից, նա թագավորության մեջ գտնված բոլոր մարդկանցից խելոք կլինի և կկարողանա խելացի դարձնել նրան, վորին բոլորից ավելի սիրի:

Բոլորը շատ էյին ուրախացել բարի կախարդուհու գուշակությունից, բայց ամենքից ավելի ուրախացավ թագուհին: Նա ուզեց շնորհակալություն հայտնել կախարդուհուն, բայց վերջինս անհետացավ այնպես աննկատելի կերպով, ինչպես վոր յերեվացել էր:

Կախարդուհու գուշակությունը կատարվեց: Հազիվ յերեխան սովորել էր արտասանել առաջին բառերը՝ խոսում էր այնքան խելացի և ներդաշնակ, վոր բոլորն սքանչացան և բացահայտեցին.

— Ա՛խ, վորքան խելացի յե փոքրիկ թագավորագնդ:

Մոռացա ասել, վոր թագավորի տղան ծնվելու ժամանակ գլխին ունեց մի փունջ մաղ: Այդ պատճառով նրան կանչում էյին Ռիկե—Փուփուշիկ:

Այդ նույն ժամանակ հարեվան թագուհին ծնեց մի աղջիկ: Նա չքնաղ էր ինչպես գարնանային օր: Թագուհին, տեսնելով թե ինչքան սիրուն է իր աղջիկը, քիչ էր մնում խելքը կորցնեք ուրախությունից: Սակայն այդ նույն կախարդուհին, վոր փոքրիկ Ռիկեյի ծննդյան ժամանակ ներկա յեր, ասաց նրան.

— Այդպես մի ուրախանաք, թագուհի, փոքրիկ իշխանուհին վորքան սիրուն է, այնքան էլ հիմար կլինի:

Այդ գուշակությունը շատ տխրեցրեց թագուհուն: Նա լաց յեղավ և խնդրեց կախարդուհուն, վորպեսզի իր փոքր աղջկան դոնե քիչ խելք տա:

— Այդ չեմ կարող,—ասաց կախարդուհին,—բայց յես կարող եմ անել այնպես, վոր իշխանուհին ում վոր սիրի նա դառնա այնքան գեղեցիկ, վորքան ինքն է:

Այդ ասելով, կախարդուհին անհետացավ:

Իշխանուհին մեծանում էր և տարեց տարի ավելի և ավելի գեղեցկանում: Բայց գեղեցկության հետ միասին ավելանում էր և նրա հիմարությունը:

Յերբ նրան մի բան էյին հարցնում, նա վռչինչ չէր պատասխանում, կամ այնպիսի հիմար պատասխան էր տալիս, վոր բոլորն ականջները փակում էյին: Բացի դրանից, նա այնքան ապուշ էր, վոր չէր կարող սեղանին դնել բաժակը, առանց կոտրելու, իսկ յերբ ջուր էր խմում, կեսը թափում էր իր շորի վրա: Այդ պատճառով, չնայած նրա գեղեցկության, նա վոչ վորի դուր չէր գալիս:

Յերբ պալատում հյուրեր էյին հավաքվում, բոլորը նախ դնում էյին գեղեցկուհու մոտ, նրան տեսնելու և սքանչանալու, բայց շուտով հեռանում էյին նրանից, լսելով նրա հիմար խոսքերը:

Այդ շատ էր վշտացնում իսկոճ իշխանուհուն: Նա առանց ցավելու պատրաստ էր տալ իր բոլոր գեղեցկությունը՝ մի կաթիլ խելքի համար:

Թագուհին, վորքան էլ սիրում էր աղջկան, բայց և այնպես չէր կարող իրեն զսպել և հանդիմանում էր նրան՝ հիմարության համար: Այդ վերաբերմունքն իշխանուհուն էլ ավելի յեր տանջում:



Մի անգամ նա գնաց անտառ իր դժբախտութեան վրա վողբարու: Անտառում գրոսներէս նա տեսավ փոքր, կուզիկ մի մարդ, շատ տգեղ, բայց շքեղ հագնված: Մարդն ուղիղ գալիս եր դեպի նա:

Այդ յերիտասարդ իշխանը Ռիկե—Փուփուշիկն եր: Տեսնելով գեղեցկուհի—իշխանուհու նկարը, նա սիրահարվել եր նրան: Թողնելով իր թագավորութունը, նա յեկել եր այստեղ, վորպեսզի խնդրի նրա ձեռքը:

Ռիկեն շատ ուրախացավ, հանդիպելով գեղեցկուհուն: Նա բարեկեց նրան և, նկատելով, վոր իշխանուհին շատ տխուր ե, ասաց.

— Իշխանուհի, ինչո՞ւ դուք այդպես տխուր եք: Ձե՞՞ վոր դուք այնքան յերիտասարդ եք և գեղեցիկ: Յես տեսել եմ շատ գեղեցիկ իշխանուհիներ, բայց ձեզ պես գեղեցկուհու յես յերբեք չեմ հանդիպել:

— Դուք շատ բարի յեք, իշխան,—պատասխանեց նրան գեղեցկուհին, բայց այդտեղ ել կանգ առալ, վորովհետեւ իր հիմարութեան պատճառով չկարողացավ վոչինչ ավելացնել:

— Այգլիսի գեղեցկուհուն միթե՞ սազում ե տխրել,— շարունակեց Ռիկե—Փուփուշիկը:

— Յես ավելի շուտ կհամաձայնվեյի,—ասաց իշխանուհին,—լինել այնպես տգեղ ինչպես դուք եք, քան լինել այսպես գեղեցիկ և այսպես հիմար, ինչպես ինքս եմ:

— Իշխանուհի, դուք յերբեք այնքան ել հիմար չեք, յեթե ձեզ համարում եք հիմար: Ով իսկական հիմար ե, նա վոչ մի գնով չի խուստովանում այդ:

— Այդ յես չգիտեմ,— ասաց իշխանուհին,— յես գիտեմ միայն, վոր շատ հիմար եմ, դրա համար ել յես անչափ տխուր եմ:

— Դե, յեթե դուք միայն դրա համար եք տխուր, յես կարող եմ հեշտութեամբ վերջ տալ ձեր տխրութեանը:

— Ինչպե՞ս պիտի անեք այդ,— հարցրեց իշխանուհին:

— Յես կարող եմ,— ասաց Ռիկե—Փուփուշիկը,— դարձնել խելացի այն աղջկան, վորին ամենից շատ տխրեմ: Քանի վոր յես աշխարհում ձեզ ամենից շատ եմ տխուր, դրա համար ել յես կարող եմ ձեզ տալ այնքան խելք, վորքան դուք ցանկանար, յեթե դուք համաձայնվեք ինձ հետ ամուսնանալ:

Իշխանուհին շփոթվեց և վոչինչ չպատասխանեց:

— Տեսնում եմ, վոր իմ առաջարկութունը վշտացրեց ձեզ,

— ասաց Ռիկե—Փուփուշիկը,— բայց յես չեմ դարձանում դրա համար: Ձեզ տալիս եմ մի ամբողջ տարի մտածելու: Մի տարուց հետո յես կգամ պատասխան ստանալու:

Իշխանուհին կարծում եր, վոր տարվա վերջը յերբեք չպիտի գար, և համաձայնվեց:

Հենց վոր խոստացավ Ռիկե—Փուփուշիկի հետ ամուսնանալ, նա իրեն զգաց բոլորովին ուրիշ: Այդ իսկ րոպեյից, նա սկսեց սահուն և լավ խոսել Ռիկե—Փուփուշիկի հետ և այնքան խելք բաներ ասաց, վոր Ռիկե—Փուփուշիկը մտածեց, թե արդյոք չտվե՞ց նրան ավելի խելք, քան մնաց իրեն:

Յերբ իշխանուհին վերադարձավ պալատ, պալատականները չգիտեյին, թե ինչ մտածեն նրա մեջ կատարված հանկարծակի և արագ փոփոխութեան մասին: Իշխանուհին գնացել եր անտառ բոլորովին հիմար, իսկ վերադարձել արտակարգ խելքով և դատողութեամբ:

Թագավորը գիմում եր իշխանուհու խորհրդին և մինչև անգամ նրա սենյակումն եր վճռում կարևոր պետական գործերը:

Այդ արտասովոր փոփոխութեան լուրը տարածվեց ամեն կողմ: Բոլոր հարեան թագավորութունների յերիտասարդ իշխաններն սկսեցին այցելութեան գալ: Ամեն մեկը ձգնում եր դուր գալ իշխանուհուն և խնդրել նրա ձեռքը: Բայց իշխանուհին գտավ նրանց վոչ բավական խելք և չհամաձայնվեց նրանցից վոչ վոքի հետ ամուսնանալ:

Վերջապես, մի անգամ յեկավ շատ հարուստ, շատ խելք և շատ վախելչակազմ մի թագավորագն: Նա անմիջապես դուր յեկավ իշխանուհուն:

Թագավորը նկատեց այդ և ասաց, վոր յեթե ցանկանում ե, կարող ե ամուսնանալ այդ թագավորագնի հետ:

Իշխանուհին ցանկանալով ավելի լավ մտածել, թե ինչպես վարվի նրանց հետ, գնաց զբոսնելու և բոլորովին պատահական կերպով մտավ այն անտառը, ուր մի տարի առաջ հանդիպել եր Ռիկե—Փուփուշիկին:


Անտառում զբոսնելու և մտածելու ժամանակ, իշխանուհին գետնի տակից լսեց խուլ աղմուկ: Թվում եր, վոր այնտեղ հետ ու առաջ ելին վազում և շարժվում մարդիկ:

Իշխանուհին կանգ առավ և ուշադրութեամբ ականջ դնելով, լսեց.

— Տո՛ւր ինձ կաթսան.

— Փայտ գցի՛ր կրակի մեջ...





Այդ ժամանակ գետինը բացվեց և իշխանուհին տեսավ իր վնասների տակ մի մեծ ստորերկրյա խոհանոց, լիքը խոհարարներով, մատուցողներով և ամեն տեսակ սպասավորներով: Խոհարարների մի խումբ, սպիտակ գլխակապերով և գոգնոցներով, ձեռքում մեծ դանակներ բռնած, դուրս յեկան այդ ստորերկրյա խոհանոցից: Նրանք ուղղվեցին դեպի անտառային բացատներից մեկը, տեղավորվեցին յերկար սեղանի շուրջը և սկսեցին միս ջարդել, ուրախ յերգեր յերգելով:

Չարմացած իշխանուհին հարցրեց նրանց, թե ո՛ւմ համար են պատրաստում այդպիսի ճոխ խնձույթ:

— Ռիկե-Փուփուշիկ իշխանի համար, — պատասխանեց նրան ամենից գեր խոհարարը: — Վաղը նա կատարում է իր հարսանիքը:

Այդտեղ իշխանուհին հիշեց, վոր ուղիղ մեկ տարի առաջ, նույն օրը, նա խոստացել էր ամուսնանալ այդ այլանդակ տղայի հետ, և քիչ էր մնում ընկներ ուշաթափ:

Սթափվելուց հետո, իշխանուհին ավելի առաջացավ, բայց հազիվ յերեսուն քայլ էր արել, յերբ նրա առաջ յերևաց Ռիկե-Փուփուշիկը՝ առողջ, զվարթ, հրաշալի հագնված՝ ճիշտ փեսացու իշխանի նման:

— Տեսնում եք, իշխանուհի, յես իմ խոսքի տերն եմ, — ասաց նա: — Կարծում եմ, վոր դուք յեկել եք այստեղ, վորպեսզի կատարեք ձեր խոսքը և ինձ աշխարհի ամենաբախտավոր մարդը դարձնեք:

— Վո՛չ, — պատասխանեց իշխանուհին, — յես դեռ չեմ վրձնել, այո, և յերևի յերբեք ել չեմ վճռելու ձեզ հետ ամուսնանալ:

— Բայց ինչո՞ւ համար, — հարցրեց Ռիկե-Փուփուշիկը: — Միթե՞ դուք չեք ուզում ինձ հետ ամուսնանալ իմ տղեղության պատճառով: Կարող ե պատահել, վոր ձեզ դուր չեն գալիս իմ խելքը կամ իմ բնավորութ՞յունը:

— Վո՛չ, — պատասխանեց իշխանուհին, — ինձ դուր է գալիս թե՛ ձեր խելքը և թե՛ ձեր բնավորութ՞յունը...

— Նշանակում ե, վոր ձեզ վախեցնում է միայն իմ այլանդակութ՞յունը, — ասաց Ռիկե-Փուփուշիկը: — Բայց այդ կարելի յե ուղղել, վորովհետև դուք կարող եք ինձ շատ գեղեցիկ մարդ դարձնել:

— Իսկ ի՞նչպես կարելի յե անել այդ, — հարցրեց իշխանուհին:



— Շատ պարզ, — պատասխանեց Ռիկե-Փուփուշիկը: — Յեթե դուք ինձ սիրեք և ցանկանաք, վոր յես լինեմ գեղեցիկ, յես ել կդառնամ գեղեցիկ: Կախարդուհին ինձ տվեց խելք և ընդունակութիւն՝ խելացի դարձնելու այն աղջկան, վորին յես սիրեմ: Յե՛վ այդ նույն կախարդուհին ձեզ տվեց ընդունակութիւն՝ գեղեցիկ դարձնելու նրան, վորին դուք սիրեք:

— Յեթե այդ այդպես է, — ասաց իշխանուհին, — ապա յես բոլոր սրտով փափագում եմ, վոր դուք աշխարհում ամենագեղեցիկը լինեք:

Յե՛վ իշխանուհին դեռ չէր արտասանել այս խոսքերը, յերբ Ռիկե-Փուփուշիկը յերևաց նրան ամենագեղեցիկ և ամենից վայելչակազմ մարդը, վորպիսին նա յերբեք տեսել էր:

Ասում են, վոր կախարդուհիները և նրանց կախարդանքն այստեղ վոչ մի դեր չեն խաղացել: Պարզապես իշխանուհին, սիրելով Ռիկե-Փուփուշիկին, այլևս չտեսավ նրա այլանդակութիւնը: Ինչ վոր առաջ նրա մեջ իրեն թվում էր տգեղ, սկսեց յերևալ գեղեցիկ և հրապուրիչ:

Այսպես թե այնպես, իշխանուհին տեղնուտեղը համաձայնվեց նրա հետ ամուսնանալ և հաջորդ որն ել նրանք կատարեցին հարսանիքը:

## ՔՆԱԾ ԳԵՂԵՑԿՈՒՅԻՆ

Լինում է չի լինում մի թագավոր և մի թագուհի: Յերկար ժամանակ նրանք ապրում էին սիրով և համերաշխ, բայց յերեսա չունեցին և այդ պատճառով շատ տխուր էին: Վերջապես թագուհին ունեցավ մի աղջիկ:

Թագավորն ուրախութիւնից ճոխ խնճուղք սարքեց և հրավիրեց իր յերկրում գտնված բոլոր կախարդներին: Թագավորը ցանկանում էր, վոր յուրաքանչյուր կախարդ վորևէ շնորհք պարգևի փոքրիկ իշխանուհուն:

Յերբ կախարդները պալատ յեկան, նրանց նստեցրին ճոխ դարդարված սեղանի մոտ: Նրանցից յուրաքանչյուրի առջև դրին վոսկե սարք, զարդարված թանգազին քարերով: Յերբ բոլորը տեղավորվեցին սեղանի շուրջը, անսպասելիորեն ներս մտավ կաղ վոտքով մի չար-պատավ կախարդ: Նրան չեղին հրավիրել խնճուղքի, վորովհետև նա արդեն յերկար տարիներ դուրս չէր գալիս իր ամրոցից և բոլորը կարծում էին, թե մեռել է:

Թագավորը հրամայեց տալ վոսկյա սարք նաև այդ կախարդուհուն: Բայց չգտան, վորովհետև պատվիրված էր միայն յոթը սարք՝ հրավիրված յոթը կախարդուհիների համար: Պառավել կարծեց, թե դիտմամբ և վերավորելու համար իրեն չեն հրավիրել խնճուղքի և չեն պատրաստել սարքը, ուստի բարկացած՝ սպառնալիքներ մըթմըթաց:

Նրա կողքին նստած էր մի բարի կախարդուհի: Նա լսեց պառավ կախարդուհու մըթմըթոցը և դուշակեց, վոր նա պատրաստվում է ինչ վոր չար բան անելու փոքրիկ իշխանուհուն:





Ընթրիքից անմիջապես հետո, նա գնաց իշխանուհու ննջարանը  
և թագնվեց վարագույրի հետև:

Շուտով կախարդուհիները մտան ննջարան և մոտեցան  
փոքրիկ իշխանուհու որորոցին, հայտնելու իրենց ցանկու-  
թյունները: Առաջին կախարդուհին ցանկություն հայտնեց, վոր  
իշխանուհին լինի աշխարհի ամենագեղեցիկը, յերկրորդը՝ վոր  
նա լինի ամենախելոքը, յերրորդը՝ վոր նա լինի ամենից շնոր-  
հալին, չորրորդը՝ վոր իմանա շատ լավ պարել, հինգերորդը՝  
վոր սոխակի պես յերգի, իսկ վեցերորդը՝ վոր նվագի ամեն տե-  
սակ յերաժշտական գործիքներ:

Յերբ հերթը հասավ պառավ կախարդուհուն, նա, ավելի  
չուտ բարկությունից, քան թե ծերությունից, շարժելով գլուխն  
ասաց, վոր իշխանուհին, յերբ տասնհինգ տարեկան դառնա,  
ծակի ձեռքն իլիկով և մեռնի: Բոլորը ցնցվեցին, լսելով այդ-  
պիսի սարսափելի ցանկություն, բայց այդ ընդմեջ վարա-  
գույրի հետևից դուրս յեկավ բարի կախարդուհին և բարձրա-  
ձայն ասաց.


— Հանգստացե՛ք, թագավոր և թագուհի, ձեր աղջիկը չի  
մեռնի: Ճիշտ է, վոր յես այնքան կարողություն չունեմ ամ-  
բողջովին վերացնելու այն, ինչ վոր ասաց չար կախարդուհին.  
իշխանուհին կծակի ձեռքը իլիկով, բայց փոխանակ մեռնելու,  
կընկնի խոր քնի մեջ, վոր տեւելու յե հարյուր տարի: Հարյուր  
տարուց հետո կգա յերիտասարդ թագավորագնը և նրան կզար-  
թեցնի:

Թագավորը ցանկանալով կանխել դժբախտությունը, ան-  
միջապես մի հրովարտակ հրատարակեց և մահվան սպառնալի-  
քով արգելեց բոլորին իլիկով մանելը և նույնիսկ իլիկ պահելը:  
Այդպես անցավ տասնհինգ տարի և բոլորը մոռացել էին  
չար պառավի դուշակության մասին:

Մի անգամ թագավորը թագուհու և աղջկա հետ գնացել էր  
դրոսանքի՝ քաղաքից դուրս գտնված իրենց դղյակում: Յերի-  
տասարդ իշխանուհին սենյակից սենյակ վազելով՝ տեսավ մի  
սանդուխ և բարձրացավ նրա վրայով մինչև կտուրի տակը:  
Այնտեղ, փոքր սենյակում, նստած էր մի կուզիկ պառավ և ի-  
լիկ էր մանում: Նա չգիտեր, թե թագավորն արգելել էր իլիկ  
մանելը:

- Ի՞նչ էք անում, տատի՛կ, — հարցրեց իշխանուհին:
- Մանում եմ, աղջի՛կս, — պատասխանեց պառավ կինը:
- Ա՛խ, ի՞նչ հետաքրքիր է, — ասաց իշխանուհին: — Ի՞նչ-





պես եք մանուս: Տվեք յես ել փորձեմ, գուցե յես ել կարողանամ մանել:

Բայց հազիվ եր իշխանուհին վերցրել իլիկը, անմիջապես ծակեց մատը և ուշազնաց ընկավ:

Պառավը չափազանց վախեցավ և սկսեց ոգնություն կանչել: Ամեն կողմից վազեցին մարդիկ: Նրանք ջուր ցանեցին իշխանուհու յերեսին, նրա քունքերը շփեցին քացախով, բայց բուրոնքը անոգուտ: Այն ժամանակ թագավորը հիշեց կախարդուհու գուշակութունը և հասկացավ, վոր այս դեպքում այլևս վոչինչ չի ոգնի: Նա հրամայեց փոխադրել իշխանուհուն պալատի ամենալավ սենյակը և պառկեցնել վոսկյա և արծաթյա գործվածքներով պատրաստված անկողնում:

Իշխանուհին պառկել եր ինչպես կենդանի եյակ. կախարդական քունը չեր տարել նրա այտերի կարմրությունը, միայն աչքերն եյին փակված: Բայց իշխանուհու հանգիստ չնչառությունը ցույց եր տալիս, թե նա չի մահացել, այլ նիրհել ե: Թագավորը հրամայեց, վոր թույլ տան նրան հանգիստ քնելու, մինչև վոր նրա զարթնելու ժամանակը հասնի:


Բարի կախարդուհին— վոր փրկել եր իշխանուհու կյանքը, փոխարինելով նրա մահը հարյուր տարվա քնով— իմացավ այդ բոլոր դեպքերի մասին: Նա անմիջապես դղյակ յեկավ հրեղեն կառքով, վորին լծված եյին վիշապներ:

— Վորպեսզի իշխանուհին չարսափի զարթնելիս, — ասաց կախարդուհին, — յես քնացնում եմ բոլոր նրանց, վոր գտնվում են այս դղյակում: Բայց հենց վոր իշխանուհին զարթնի, նրա հետ միասին պիտի զարթնեն նաև բոլորը:

Այդտեղ նա իր կախարդական փայտիկը խփեց բոլոր նրանց, ովքեր գտնվում եյին դղյակում, բացի թագավորից և թագուհուց: Նա խփեց բոլոր պալատական կանանց, ծառաներին, սպասավորներին, զինվորներին, խոհարարներին, աղարխիներին, ախոռում կապված ձիերին, բակի մեծ շանը և իշխանուհու փոքրիկ շնիկին: Յեվ ամեն մեկին, վոր խփում եր, նա անմիջապես քնում եր և պիտի զարթներ միայն այն ժամանակ, յերբ զարթներ իշխանուհին: Կրակը նույնիսկ քնեց կրակարանում: Յեվ այս բոլորը կատարվեց մի ակնթարթում:

Յերբ բոլորը քնեցին, թագավորը և թագուհին համբուրեցին իշխանուհուն և հեռացան դղյակից: Այդ իսկ բոպեյին դրդյակի շուրջն աճեցին այնքան մեծ և փոքր ծառեր, այնքան թր-





փուռներ և մացառներ, վոր վո՛չ մարդ և վո՛չ գազան չեյին կարող անցնել այնտեղից: Դղյակը բոլորովին անհայտացավ այդ անտառում: Միայն յերևում էր աշտարակի գազաթը: Իհարկէ այդ անտառն էլ աճեց բարի կախարդուհու հրամանով, վորպեսզի հետաքրքրվողները չխանդարեն իշխանուհուն՝ նրա քնած ժամանակ:

Հարյուր տարի հետո՝ հարեան թագավորի տղան վորսի գնաց այդ կողմը և տեսավ այդ խիտ անտառում աշտարակի գազաթը:

— Ո՞ւմն է այս դղյակը, — հարցրեց նա:

Թագավորի տղան՝ ում վոր դիմեց այս հարցով՝ ամեն մեկից տարբեր պատասխան ստացավ: Մեկն ասաց, թե այդ հին դղյակ է, վորտեղ թափառում են չար վոգելները. ուրիշներ վստահացնում էյին, թե այդտեղ վհուկներն իրենց պարերն են սարքում գիշերները: Իսկ մեծամասնությունը պնդում էր, թե այդտեղ ապրում է մի մարդակեր, վոր բռնում է փոքրիկ յերեխաներին, բերում է այդտեղ և ուտում է, վորովհետև վոչ մի մարդ չի կարող հետապնդել նրան այդ խիտ անտառում և սպանել նրան:

Թագավորի տղան չգիտեր, թե վորին հավատար. սակայն այդտեղ նրան մոտեցավ արեհեր մի ծերուկ և ասաց.

— Յես լսել եմ, վոր այդ դղյակում պառկած է արտասովոր դեղեցիկ մի իշխանուհի: Նա հմայված է, և պիտի քնի մինչև այն ժամանակ, յերբ նրան արթնացնի յերիտասարդ թագավորագնը, վորի կինը պեռք է լինի. և այդ կանխորոշված է:

Լսելով այս, թագավորի տղան վորոչեց անմիջապես գնալ քնած գեղեցիկուհու պալատը: Հագիվ էր նա առաջացել դեպի անտառը, բոլոր մեծ ծառերը և փշոտ մացառուտները ինքնաբերաբար միմյանցից հեռացան և նրա առաջ ճանապարհ բաց արին: Բայց թագավորի տղայի ծառաներից վոչ մեկը չկարողացավ նրա հետևից գնալ, վորովհետև ծառերն ու մացառուտները մոտեցան իրար՝ նրա անցներուց անմիջապես հետո: Իսկ այդ չվախեցրեց թագավորի տղային և նա վստահությամբ առաջ գնաց:

Շուտով նա մի կերպ հասավ մինչև դղյակը և մտավ բակը, վորտեղ մեռելային լուսթյուն էր տիրում: Այստեղ տարածված էյին մարդկանց և կենդանիների մարմիններ: Թագավորի տղան նրանց մեռածի տեղ ընդունեց, բայց, լավ գիտելով դռնապանների կարմիր յերեսներն ու քիթը, յեղբակացրեց, վոր նրանք





մեռած չեն, այլ միայն քնած: Նրանց առջև դրված գինու բա-  
ժակները ցույց եյին տալիս, թե քնել են ուրախ խնճուղքի ժա-  
մանակ:

Թագավորի տղան առաջ գնաց և մտավ յերկրորդ բակը,  
վոր սալահատակված եր մարմարով: Այդտեղից նա սանդուխ-  
ներով բարձրացավ և մտավ մեծ սենյակը: Այստեղ յերկու շար-  
քով կանգնել եյին պահակները, հրացանն ուսերին և ուժգին  
խումփացնում եյին: Թագավորի տղան անցավ շատ սենյակներ,  
վորտեղ պառկած կամ կանգնած քնել եյին պալատականները և  
վերջապես մտավ ճոխ դարձարված, բոլորովին վոսկեզոծ մի  
սենյակ:

Այդ սենյակում չքեղ անկողնի վրա պառկած եր իշխանու-  
հին: Թագավորի տղան մոտեցավ քնած գեղեցկուհուն և չոքեց  
նրա առջև: Իշխանուհին այնքան լավն եր, վոր թագավորի տը-  
ղան չկարողացավ իրեն զսպել և համբուրեց նրան:

Հենց այդ րոպեյին կախարդուհու գուշակությունը կա-  
տարվեց. իշխանուհին դարթնեց և տեսնելով յերիտասարդ թա-  
գավորազնին՝ մեղմ ձայնով ասաց.

— Այդ դո՞ւք եք, իշխան, ի՞նչքան յերկար սպասեցի ձեզ:

Թագավորի տղան, ուրախանալով իշխանուհու այդ խոսքե-  
րից և սիրալիւր ձայնից, ասաց, վոր սիրում ե նրան աշխարհում  
ամեն բանից ավելի, և բախտավոր ե, վոր իրեն հաջողվեց ա-  
զատել նրան կախարդական քնից: Նրանք իրար հետ յերկար խո-  
սեցին, բայց չասացին նույնիսկ կեսը այն խոսքերի, վոր նրանք  
ուզում եյին ասել:

Իշխանուհու հետ արթնացավ նաև ամբողջ դղյակը: Ամին  
մեկն իր գործին անցավ: Յեվ վորովհետև հարյուր տարի յեր  
անցել վերջին անգամ ձաշելուց, բոլորն էլ սաստիկ ցանկանում  
եյին ուտել: Գլխավոր պալատական կինը, վոր քաղցած եր  
ինչպես բոլորը, մտավ իշխանուհու սենյակը և բարձրաձայն  
ասաց.

— Ճաշը պատրաստ ե:

Իշխանուհին արագ վեր կացավ անկողնից և թագավորի տը-  
ղայի հետ գնաց թևանցուկ: Նրանք մտան հայելապատ դահլիճը  
և սեղան նստեցին: Նրանց կերակուր եյին մատուցում իշխանու-  
հու ծառաները, իսկ յերաժիշտները նվագում եյին ջութակի և  
սրնգի վրա հրաշալի մեղեդիներ:

Մյուս որը ուրախ հարսանիք արին, և թագավորի տղան  
տարավ իշխանուհուն իր յերկիրը, վորտեղ և ապրեց նրա հետ  
մինչև իր կյանքի վերջը՝ ուրախ և բախտավոր:




## ԵՃԻ ԿԱՃԻՆ

Ժամանակով ապրում եր հարուստ և հզոր մի թագավոր: Նա այնքան վուսկի և զինվոր ունեւր, վորքան չեր տեսել վոչ մի ուրիշ թագավոր: Նրա կինը աշխարհի ամենագեղեցիկ և խելացի կինն եր: Թագավորն ապրում եր թագուհու հետ համերաշխ և բախտավոր, բայց հաճախ նրանք ցավում եյին յերեսա չունենալու համար: Վերջապես նրանք վճռեցին վերցնել վորեւե մի աղջիկ և դաստիարակել նրան, հարագատ աղջկա պես: Շուտով առիթը ներկայացավ: Թագավորի մոտիկ բարեկամներից մեկը մեռավ և թողեց իր աղջկան՝ փոքրիկ իշխանուհուն: Թագավորը և թագուհին իսկույն նրան վերցրին պալատ՝ իրենց մոտ:

Աղջիկը մեծանում եր և որեցոր ավելի և ավելի գեղեցկանում: Այդ ուրախացրեց թագավորին և թագուհուն ու նրանք նայելով իրենց սանի վրա՝ մոռացան, վոր իրենք յերեսա չունեն:

Մի անգամ թագուհին ծանր հիվանդացավ: Որեցոր նա ավելի և ավելի վատացավ: Թագավորը գիշեր-ցերեկ իր կնոջ անկողնի մոտից չեր հեռանում: Թագուհին բոլորովին թուլացավ և բժիշկները բոլորն ել ասացին, վոր նա այլևս վեր չի կենա անկողնից: Շուտով այդ հասկացավ նաև ինքը՝ թագուհին: Նա, զգալով մոտալուտ մահը, կանչեց թագավորին և ասաց նրան ցածր ձայնով.

— Գիտեմ, վոր շուտով պիտի մեռնեմ: Մահվանից առաջ յես ուզում եմ ձեզ խնդրել միայն մի բան. յեթե մտադրություն կունենաք ամուսնանալ յերկրորդ անգամ, ապա ամուսնացեք





միայն այն կնոջ հետ, վոր ինձնից ավելի գեղեցիկ և լավ լինի:  
Թագավորը բարձրաձայն հեկեկալով, խոստացավ թագուհուն կատարել նրա ցանկութունը, և թագուհին մեռավ:

Կնոջը թաղելուց հետո, թագավորը վշտից իրեն կորցրեց, վռչինչ չէր ուտում ու խմում և այնպես ծերացավ, վոր նրա բոլոր մինիստրները սարսափեցին այդպիսի փոփոխութունից:

Մի անգամ, յերբ թագավորը, հառաչելով և լալով, նստած էր իր սենյակում, նրան ներկայացան մինիստրները և խնդրեցին, վոր դադարեցնի սգալը և շուտով ամուսնանա:

Բայց թագավորն այդ մասին լսել անգամ չէր ուզում: Սակայն և այնպես մինիստրները նրանից ձեռք չբաշխեցին և սնդուկ եյին, վոր թագավորն անպայման պետք է ամուսնանա: Բայց վորքան ել մինիստրները աշխատեցին, չկարողացան համոզել թագավորին: Վերջապես այնքան ձանձրացրին նրան իրենց առաջարկութուններով, վոր մի անգամ թագավորն ասաց նրանց.

— Յես խոստացա հանգուցյալ թագուհուն ամուսնանալ յերկրորդ անգամ միայն այն դեպքում, յեթե գտնեմ նրանից ավելի սիրուն և լավ կին: Բայց այդպիսի կին չկա ամբողջ աշխարհում: Այդ պատճառով յես յերբեք չեմ ամուսնանա:

Մինիստրներն ուրախացան, վոր թագավորը գտնե մի քիչ զիջեց և սկսեցին ամեն ուր ցուլց տալ նրան՝ ամենահայտնի գեղեցկուհիների նկարները, վորպեսզի այդ նկարներով թագավորն իրեն կին ընտրեր: Բայց թագավորն ասաց, վոր մահացած թագուհին ավելի լավն էր և մինիստրները հեռացան առանց հետեվանքի հասնելու:

Վերջապես, մի անգամ գլխավոր մինիստրը յեկավ թագավորի մոտ և ասաց նրան.

— Թագավոր, միթե՞ ձեր սանիկն իր խելքով և գեղեցկությամբ հանգուցյալ թագուհուց ավելի ցածր է թվում ձեզ: Նա այնքան խելացի և գեղեցիկ է, վոր նրանից ավելի լավ կին չեք գտնի: Ամուսնացեք նրա հետ:

Թագավորին թվաց, վոր իր յերիտասարդ սանր-իշխանուհին ավելի լավ և ավելի գեղեցիկ թագուհի կլինի, ուստի, նա այլևս չմերժեց և համաձայնվեց ամուսնանալ իր սանուհու հետ:

Մինիստրները և բոլոր պալատականները գոհ մնացին, բայց իշխանուհուն այդ թվաց սարսափելի: Նա բոլորովին չէր ուզում ծերունի թագավորի կին դառնալ: Սակայն թագավորը չլսեց





նրա առարկութունը և հրամայեց նրան վորքան կարելի յի շուտ պատրաստվել հարսանիքի:

Յերիտասարդ իշխանուհին հուսահատ դրության մեջ էր: Նա չգիտեր, թե ինչ աներ: Վերջապես, նա հիշեց Սիրենի կախարդուհուն, իր մորաքրոջը, և վորոչեց նրա հետ խորհրդակցել: Հենց նույն գիշեր նա գնաց կախարդուհու մոտ վոսկյա կառքով, վորին լծել էր բոլոր ճանապարհներին ծանոթ մի մեծ վոչխար:

Կախարդուհին ուշադրությամբ լսեց իշխանուհու պատմածը:

— Յեթե դու կետ առ կետ կատարես, ինչ վոր քեզ հրամայեմ, — ասաց նա, — վոչինչ չի կարող քեզ վնասել:

Իշխանուհին խոստացավ լսել նրան, և կախարդուհին ասաց.

— Ամենից առաջ թագավորից պահանջիր մի յերկնագույն զգեստ: Այդպիսի զգեստ նա չի կարող ճարել:

Իշխանուհին շնորհակալութուն հայտնեց կախարդուհուն նրա տված խորհրդի համար և վերադարձավ տուն: Հաջորդ առավոտ նա ասաց թագավորին, վոր մինչև նրանից չստանա յերկնագույն զգեստ, չի համաձայնվի նրա հետ ամուսնանալ:

Թագավորն անմիջապես իր մոտ կանչեց ամենալավ վարպետներին և հրամայեց նրանց կարել յերկնագույն զգեստ:

— Յեթե դուք չգոհացնեք իշխանուհուն, — ավելացրեց նա, — կհրամայեմ ձեզ բոլորիդ կախել:

Մյուս որն իսկ վարպետները բերին պատվիրված զգեստը և նրա հետ համեմատելով կապույտ յերկնակամարն անգամ չըրջապատված վոսկեգույն ամպերով, այնքան գեղեցիկ չեր:

Իշխանուհին, ստանալով շորը, այնքան չուրախացավ, վորքան վախեցավ: Նա նորից գնաց կախարդուհու մոտ և հարցրեց, թե այժմ ի՞նչ անի: Կախարդուհին շատ զարմացավ, վոր իր միտքը չհաջողվեց, և պատվիրեց իշխանուհուն թագավորից պահանջել լուսնյակի գույն զգեստ:

Թագավորը չեր կարող իշխանուհուն վոչինչ մերժել: Նա կանչեց իր յերկրում գտնվող ամենահմուտ վարպետներին և այնպիսի սպառնալից ճայնով նրանց հրաման արձակեց, վոր գեռ մի որ չանցած, վարպետներն արդեն բերին զգեստը:

Այդ հիանալի զգեստը տեսնելով իշխանուհին ել ավելի վշտացավ:

Սիրենի կախարդուհին, վոր գիտեր յերկրորդ անհաջողության մասին, հայտնվեց իշխանուհուն և ասաց նրան.

— Այս յերկու անգամ թագավորին հաջողվեց կատարել քո խնդիրքը: Տեսնե՞ք այդ կհաջողվի՞ նրան այժմ, յերբ դու պահանջես նրանից արևի պես փայլուն զգեստ: Հազիվ թե հաջողվի նրան ձեռք բերել այդպիսի զգեստ: Համենայն դեպս, մենք ժամանակ կշահենք:

Իշխանուհին համաձայնվեց և թագավորից պահանջեց այդպիսի զգեստ: Թագավորն առանց տատանվելու տվեց իր թագի բոլոր ադամանդները և թանգազին քարերը, վորպեսզի զգեստը լինի արևի նման փայլուն: Յերբ զգեստը բերին ուրաց արին, բոլորն անմիջապես փակեցին իրենց աչքերը. ճիշտ վոր նա փայլում էր իսկական արևի պես:

Չուրախացավ միայն իշխանուհին: Նա գնաց իր սենյակը, ասելով, թե նրա փայլից իր աչքերը ցավեցին, և սկսեց դառնորեն լաց լինել: Սիրենի կախարդուհին նորից յերևաց իշխանուհուն և շատ տխրեց, վոր իր բոլոր խորհուրդները վերջացան այդպես անհաջող:

— Դե այժմ, աղջիկս, — ասաց նա իշխանուհուն, — պահանջիր թագավորից իր սիրած եղի կաշին: Իսկ այդ անշուշտ նա քեզ չի տա:

Բայց պետք է ասել, այդ եչը, վորի կաշին կախարդուհին հրամայեց պահանջել թագավորից, արտասովոր եչ էր: Ամեն առավոտ թրիքի փոխարեն նրա տակի փեյխնը ծածկվում էր փայլուն վոսկի վողերով: Հասկանալի չե, թե ինչո՞ւ թագավորն այդպես սիրում և խնամում էր այդ եչը:

Իշխանուհին ուրախացավ: Նրան վստահեցրին, վոր թագավորը վոչ մի կերպ չի համաձայնվի սպանել եչը: Նա ուրախ վազեց թագավորի մոտ և պահանջեց եչի կաշին:

Թագավորը, թեև զարմացավ այսպիսի տարրինակ պահանջի վրա, բայց, առանց տատանվելու կատարեց: Եչը մորթեցին և նրա կաշին հանդիսավոր կերպով բերին իշխանուհուն: Իսկ այժմ նա արդեն բոլորովին չգիտեր, թե ինչ աներ: Բայց այդ ժամանակ յերևաց Սիրենի կախարդուհին:

— Այդքան շատ մի վշտանա, սիրելիս, — ասաց նա, — կարող ե պատահել ինչ վոր յեղել է մինչև այժմ, ավելի ոգտակար լինի: Փաթաթվիր եչի կաշվով և շտապ հեռացիր պալատից: Քեզ հետ վոչինչ մի վերցնի. սնդուկը՝ քո շորերով՝ քեզ պիտի հետևի գետնի տակից: Ահա քեզ իմ կախարդական փայտիկը: Յերբ դու պետք ունենաս այդ սնդուկին, խփի՛ր գետնին փայ-



տիկով և նա կդա քո առջև: Բայց հեռացիր արագ, մի ուշա-  
նա:

Իշխանուհին համբուրեց կախարդուհուն, իր վրա քաշեց  
զգվելի եշի կաշին, յերեսը մուր քսեց, վորպեսզի նրան վոչ  
վոք չճանաչի և դուրս յեկավ պալատից:

Իշխանուհու անհայտացումը մեծ աղմուկ առաջացրեց:  
Թագավորն ուղարկեց նրա հետևից հազար ձիավոր և բազմաթիվ  
հետևակ հրացանակիրներ: Բայց կախարդուհին իշխանուհուն  
անտեսանելի դարձրեց թագավորի մարդկանց աչքին: Այդ պատ-  
ճառով թագավորը ձեռք քաշեց նրան փնտռելուց:

Իշխանուհին այդ ժամանակ դնում էր իր ճանապարհով: Նա  
չատերի տունն էր մտնում և խնդրում իրեն վերցնել թեկուզ  
վորպես աղախին: Բայց վոչ վոք չուղեց իշխանուհուն իր մոտ  
վերցնել, վորովհետև եշի կաշվի մեջ նա յերևում էր չափազանց  
ուգեղ:

Վերջապես նա մտավ մի մեծ տուն: Այդ տան տիրուհին հա-  
մաճայնվեց խեղճ իշխանուհուն իր մոտ վերցնել, վորպես բան-  
վորուհի: Իշխանուհին չնորհակալութուն հայտնեց նրան և  
հարցրեց, թե ի՞նչ է պարտավոր անել: Տան տիրուհին հրամա-  
նեց նրան լվանալ սպիտակեղենը, նայել հնդկահավերին, արա-  
ծացնել վոչխարները, մաքրել խոզերի տաշտերը:

Իշխանուհուն տեղավորեցին խոհանոցում: Առաջին իսկ որից  
ծառաններն սկսեցին նրան կոպիտ կերպով ծաղրել: Սակայն՝ կա-  
մաց-կամաց ընտելացան, վորից հետո նա աշխատում էր շատ  
յեռանդուն կերպով և տանտիրուհին թույլ չէր տալիս նրան վի-  
րավորել:

Մի անգամ, իշխանուհին, գետի յեղերքին նստած, նայեց  
ջրին և տեսավ իրեն, ինչպես հայելու մեջ:

Նա վախեցավ տեսնելով իրեն, իր դարձելի եշի կաշվում,  
ամաչեց, վոր ինքն այդպես կեղտոտ է, արագ-արագ հանեց եշի  
կաշին, գետում լողացավ: Բայց յերբ տուն վերադարձավ նա,  
նորից այդ զգվելի կաշին իր վրա վերցրեց:

Բարեբախտաբար հաջորդ որը տոն էր և իշխանուհուն  
չհարկադրեցին աշխատել: Նա ոգտվեց այդ առիթից և վորոշեց  
զարդարվել իր գեղեցիկ յերկնադույն զգեստով:

Իշխանուհին գետին խփեց կախարդական փայտիկը և սնդու-  
կը դարդարանքներով նրա առջև յերևաց: Նա հանեց յերկնա-  
դույն զգեստը, վոր ստացել էր թագավորից, գնաց իր փոքր  
գեներալը և սկսվեց զարդարվել:

Նա նայեց հայելու մեջ, հիացավ իր վրա և դրանից հետո  
ամեն տոն որերին զարդարվեց իր գեղեցիկ շորերով: Բայց, վոչ  
վոք չէր տեսնում իշխանուհուն իր զարդարանքների մեջ, բացի  
վոչխարներից և հնդկահավերից: Ամենքը նրան տեսել էին  
զգվելի եշի կաշվում և այդպես էլ անվանում էին նրան—Եշի  
կաշի:

Մի անգամ յերիտասարդ թագավորագնը վերադառնալով  
վորսորդութունից, իջավ հանգստանալու այն տանը, վորտեղ  
ապրում էր Եշի կաշին: Նա մի քիչ հանգստացավ և ապա ման  
յեկավ տունը և բաղը:

Պատահաբար նա մտավ մութ միջանցքը: Միջանցքի ծայրին  
դտնվում էր մի փակ դուռ: Թագավորի տղան շատ հետաքրքր-  
վող էր, ուստի ցանկացավ իմանալ, թե ո՞վ է ապրում այդ  
դռնից ներսը: Նա նայեց փականքից: Ինչքան մեծ յեղավ նրա  
զարմանքը, յերբ տեսավ փոքրիկ նեղ սենյակում հիանալի զար-  
դարված իշխանուհուն: Նա շտապեց տանտիրուհու մոտ, իմա-  
նալու, թե ո՞վ է ապրում այդ փոքրիկ սենյակում:

Ասացին նրան, վոր այդտեղ ապրում է մի աղախին, վորին  
անվանում են Եշի կաշի: Նրան այդպես են կանչում այն պատ-  
ճառով, վոր նա զգեստի փոխարեն հագնում է եշի կաշի:  
Նա այնքան կեղտոտ է և զգվելի, վոր վոչ վոք չի ուզում վոչ  
նրա վրա նայել, վոչ էլ նրա հետ խոսել: Եշի կաշին այդ տանը  
վերցրել են միայն նրա համար, վոր նա վոչխարներն արածաց-  
նի և մաքրի խոզերի տաշտակը:

Թագավորի տղան դրանից ավելի վոչինչ չիմացավ: Նա  
վերադարձավ պալատ, բայց չկարողացավ մոռանալ գեղեցիկու-  
հուն, վորին պատահաբար տեսել էր դուռն փականքից: Նա զրդ-  
ջաց, վոր այն ժամանակ չէր մտել սենյակ և չէր ծանոթացել  
նրա հետ:

Թագավորի տղան վորոշեց ուրիշ անգամ անպայման այդ-  
պես վարվել:

Անընդհատ մտածելով հիանալի գեղեցիկուհու մասին, թա-  
գավորի տղան ծանր հիվանդացավ: Նրա մայրը և հայրը հուսա-  
հատվել էին: Նրանք բժիշկ կանչեցին, բայց բժիշկները վո-  
չինչ չկարողացան անել, և վերջիվերջո, ասացին թագուհուն,  
վոր տղան հիվանդացել է ինչ վոր մեծ վշտից: Թագուհին սկսեց  
հարց ու փորձ անել տղային, թե ինչ է պատահել նրան, բայց  
վոչ մի պատասխան չստացավ: Սակայն յերբ թագուհին ծունկ  
չոքեց և սկսեց լաց լինել նա ասաց.



— Յես ուզում եմ, վոր Եջի Կաշին ինձ մի կարկանդակ յե-  
փի ու բերի, հենց վոր պատրաստ լինի:

Թագուհին զարմացավ այս տարրինակ ցանկության վրա:  
Նա կանչեց պալատականներին և ուզեց իմանալ, թե ո՞վ է այդ  
Եջի Կաշին:

— Ա՛յ, այդ ամենազգվելի գեղտուտ աղջիկը, — ասաս պալա-  
տականներից մեկը, — նա ապրում է վոչ հեռու այստեղից և  
արածացնում է վոչխարներ և հնդկահավեր:

— Լավ, ինչ ուզում ե լինի այդ Եջի Կաշին, — ասաց թա-  
գուհին, — թող նա անմիջապես կարկանդակ յեփի թագավո-  
րազնի համար:

Պալատականները վազեցին Եջի Կաշու մոտ և հայտնեցին  
նրան թագուհու հրամանը, ավելացնելով, վոր նա կատարի այդ  
վորքան կարելի յե ավելի լավ և արագ:

Իշխանուհին փակված իր փոքր սենյակում, վայր ձգեց  
Եջի կաշին, լվաց դեմքը և ձեռները, հագավ մաքուր զգեստ և  
սկսեց պատրաստել կարկանդակը: Նա վերցրեց ամենալավ ալ-  
յուր, բոլորովին թարմ կարագ և ձու:

Աշխատելու ժամանակ, դիտմամբ թե պատահամբ, մատից  
ընկավ մատանին խոճորի մեջ և այնտեղ ել մնաց: Իսկ յերբ կար-  
կանդակը յեփվեց, իշխանուհին իր վրա առավ զզվելի կաշին,  
դուրս յեկավ սենյակից, հանձնեց կարկանդակը պալատականին  
և հարցրեց նրան, թե արդյոք ինքն ել նրա հետ գնալու՞ է թա-  
գավորի տղայի մոտ: Բայց պալատականը նույնիսկ չբարեհաճեց  
պատասխանել նրան և վազեց պալատ, իր հետ տանելով կար-  
կանդակը:

Թագավորի տղան վերցրեց կարկանդակը պալատականի  
ձեռքից և կերավ այնքան շտապ, վոր բոլոր բժիշկները շարժե-  
ցին գլուխները և ասացին.

— Լավ նշան չե այդպես շտապելը:  
Իսկապես թագավորի տղան կերավ կարկանդակն այնպիսի  
ազահությամբ, վոր քիչ մնաց խեղդվեր այն մատանիով, վոր  
նրան հանդիպել եր մի կտոր կարկանդակի մեջ: Բայց թագա-  
վորի տղան արագ բերնից դուրս հանեց մատանին և նրանից հե-  
տո այլևս այնքան շտապ կերպով չկերավ կարկանդակը: Նա  
յերկար ժամանակ գննեց մատանին, իսկ այդ այնքան փոքր եր,  
վոր կարող եր հարմարվել միայն աշխարհի ամենազեղեցիկ մա-  
տին: Թագավորի տղան շատ անգամ համբուրեց մատանին, հե-

տո պահեց բարձի տակ և այնտեղից հանում եր ամեն բույն,  
յերբ կարծում եր, թե վոչ վոք չի տեսնի:

Նա միշտ մտաբերում եր Եջի Կաշուն, բայց վախենում եր նրա  
մասին բարձր ձայնով խոսել: Այդ պատճառով նրա հիվանդու-  
թյունը ծանրացավ և բժիշկները չեյին իմանում, թե ինչ անեն:  
Վերջապես, նրանք հայտարարեցին թագուհուն, վոր նրա տղան  
սիրուց է հիվանդ: Թագուհին վազեց տղայի մոտ թագավորի  
հետ միասին, վորը նույնպես տխուր եր և չփութված:

— Տղաս, — ասաց վշտացած թագավորը, — ասա քո սիրած  
աղջկա անունը: Խոստանում ենք ամուսնացնել նրա հետ: Թե-  
կուղ նա լինի ամենահետին սպասուհին:

Թագուհին, գրկելով տղային, հավաստիացրեց թագավորի  
խոստումը կատարել: Թագավորի տղան հուզված իր ծնողների  
արտասուքից և փայփայանքից ասաց.

— Սիրելի հայրիկ և մայրիկ, յես ինքս ել չգիտեմ, թե ով  
է այն աղջիկը, վորին այդքան բուռն սիրահարվել եմ: Յես  
կամուսնանամ նրա հետ, վորի մատին այս մատանին հարմարվի  
և ով ել լինի նա:

Յեվ նա հանեց բարձի տակից Եջի Կաշու մատանին ու ցույց  
տվեց թագավորին և թագուհուն:

Թագավորը թագուհու հետ միասին վերցրին մատանին,  
հետաքրքրությամբ գննեցին և վճռելով, վոր այդպիսի մատա-  
նի կարող է հարմարվել միայն ամենից գեղեցիկ աղջկու մատին,  
համաձայնվեցին թագավորազնի հետ:

Թագավորը հրամայեց անմիջապես թմբուկները խփել և  
մուսնետիկներ ուղարկել ամբողջ քաղաքում, վորպեսզի նրանք  
պալատ հավաքեն բոլոր աղջիկներին՝ փորձելու համար այդ  
մատանին:

Մուսնետիկները վազեցին փողոցները և բարձրաձայն հայտա-  
րարեցին, թե այն աղջիկը, վորի մատին մատանին հարմարվի,  
պիտի ամուսնանա յերիտասարդ թագավորազնի հետ:

Նախ՝ պալատ յեկան իշխանուհիները, հետո՝ պալատական  
կանայք, բայց զուր տեղը նրանք աշխատում էյին իրենց մատ-  
ները բարակ ցույց տալ. վոչ մեկին չհաջողվեց մատանին անց-  
կացնել: Հրավիրեցին կարուհիներին, վորոնք թեև գեղեցիկ  
էյին, բայց հաստ մատներ ունեյին. այդ պատճառով մատանին  
չմտավ նրանց մատը:

Վերջապես հերթը հասավ սպասուհիներին. բայց նրանց



փորձը նույնպես անհաջող անցավ: Բոլորը փորձել էին արդեն մատանին: Վոչ վոքի մատին չեր հարմարվում: Այն ժամանակ թագավորի տղան հրամայեց կանչել խոհարարուհիներին, աման լվացողներին և խոզարածներին: Բերին նրանց, բայց նրանց մատները աշխատանքից այնպես էին կոշտացել, վոր մատանին չանցավ յեղունգից դեմը:

— Արդյոք բերե՞լ են այն Եշի Կաշուն, վոր այս վերջին որերս ինձ համար կարկանդակ եր պատրաստել, — հարցրեց թագավորի տղան:

Պալատականները ծիծաղեցին և պատասխանեցին, վոր Եշի Կաշուն չեն կանչել՝ չափազանց կեղտոտ և զզվելի լինելու պատճառով:

— Անմիջապես ուղարկեցեք նրա հետևից, — հրամայեց թագավորը:

Այն ժամանակ պալատականները ծիծաղելով քթի տակից, վազեցին բերելու Եշի Կաշուն:

Իշխանուհին, լսելով թմբուկների և մունետիկների ձայնը, հասկացել եր, վոր այդ բոլոր իրարանցումը առաջացրել է իր մատանին: Նա շատ ուրախացավ, յերբ տեսավ վոր գալիս են իր մոտ. շտապ սանրվեց և զարդարվեց լուսնագույն շորով: Հենց վոր իշխանուհին լսեց, թե դուռը ծեծում և կանչում են իրեն թագավորի տղայի մոտ, նա անմիջապես իր շորերի վրա քաշեց եշի կաշին և բաց արեց դուռը:

Պալատականները ծիծաղելով հայտնեցին Եշի Կաշուն, վոր թագավորը նրան կանչում է պալատ՝ ամուսնացնելու իր տղայի հետ:


Ձարմացած Եշի Կաշու ծիծաղելի տեսքից, թագավորի տղան չեր կարող հավատալ, վոր այդ այն աղջիկն է, վորին նա տեսել եր դուռն փականքի արանքից, այնքան գեղեցիկ և զարդարված: Տխուր և շփոթված թագավորի տղան հարցրեց նրան.

— Այդ դո՞ւք էյիք ապրում մուկ միջանցքի ծայրում այն մեծ տան մեջ, վորտեղ յես վերջերս հանդիպեցի, վերադառնալով վորսից:

— Այո, — պատասխանեց նա:

— Տույց տվեք ինձ ձեր ձեռքը, — շարունակեց թագավորի տղան:

Վորքան մեծ յեղավ թագավորի, թագուհու և բոլոր պալատականների զարմանքը, յերբ այդ սև և կեղտոտ կաշու տակից





դուրս յեկավ մի փոքրիկ նուրբ ձեռք և մատանին առանց դժվարութեան հարմարվեց: Այդ տեղ իշխանուհին իր վրայից նետեց եշի կաշին: Թագավորի տղան, հափշտակված նրա գեղեցկութեամբ, մոռացավ իր հիվանդութիւնը և ընկավ նրա վոտները, ուրախութեանից իրեն կորցրած:

Թագավորը և թագուհին նույնպես յեկան գրկեցին նրան և հարցրին, թե արդյոք նա ուզո՞ւմ է ամուսնանալ իրենց տղայի հետ:

Իշխանուհին շփոթված այդ բոլորից, հազիվ ինքն իրեն գտավ և ուզում էր ինչ վոր բան ասել, յերբ հանկարծ առաստաղը բացվեց և Սիրենի կախարդուհին իջավ այդտեղ, ծաղիկներով և ճյուղերից շինված կառքով, ու պատմեց իշխանուհու պատմութիւնը բոլոր ներկա յեղողներին:

Թագավորը և թագուհին լսելով կախարդուհու պատմածները՝ ել ավելի սիրեցին իշխանուհուն և անմիջապես ամուսնացրին նրան իրենց տղայի հետ:

Հարսանիք յեկան զանազան յերկրների թագավորներ-մեկը՝ կառքով, ուրիշները՝ ձի նստած, իսկ ամենահեռու տեղերից՝ փղի, վագրի, և արծվի վրա նստած:

Հարսանիքը կատարվեց այնքան ճոխ և շքեղ, վորպիսին հազիվ կարելի յե յերևակայել: Բայց թագավորի տղան և նրա ջահել կինը քիչ ուշադրութիւն դարձրին այդ շքեղութեան վրա. նրանք միայն իրար եյին նայում և միայն իրար եյին տեսնում:

## ԿԱՊՈՒՅՑ ՄՈՐՈՒՔԸ

Շատ վաղուց ապրում էր մի մարդ: Նա անչափ հարուստ էր. ուներ գեղեցիկ տներ, բազմաթիվ ծառաներ, վոսկյա և արծաթյա ամանեղեն, վոսկեզոծ կառքեր և հիանալի ձիեր: Բայց դժբախտաբար այդ մարդն ուներ կապույտ մորուք: Այդ մորուքը նրան այնքան այլանդակ ու սարսափելի յեր դարձրել, վոր բոլոր աղջիկները և կանայք նրան տեսնելուն պես վախենում և տուն եյին փախչում: Այդ մարդուն անվանում եյին—Կապույտ Մորուք:

Նրա դրացիներից մեկն ուներ յերկու աղջիկ. նրանք հայտնի գեղեցկուհիներ եյին: Կապույտ Մորուքը ցանկացավ ամուսնանալ նրանցից մեկի հետ և առաջարկեց նրանց մորը, վոր յերկուսից մեկը իրեն կնութեան տա: Բայց քույրերից վոչ մեկը չհամաձայնվեց գնալ այնպիսի մարդու, վոր Կապույտ Մորուք ուներ: Նրանց վախեցնում էր նաև այն, վոր նա արդեն մի քանի կտնանց հետ եր ամուսնացել, բայց թե ո՛ւր եյին անհետացել նրանք, վոչ վոք չգիտեր:

Վորպեսզի աղջիկները կարողանան իրեն ավելի լավ ծանոթանալ, Կապույտ Մորուքը հրավիրեց նրանց քաղաքից դուրս: Կտնված իր դղյակը՝ նրանց մորը, ընկերների և մի քանի յերիտասարդ դրացիների հետ և այնտեղ նրանց հետ մնաց ամբողջ մի շաբաթ:

Հյուրերը շատ ուրախ ժամանակ անցկացրին. նրանք ման յեկան, գնացին վորսի, ամբողջ գիշեր խնձույթ սարքեցին, պարեցին և այլն:





Կապույտ Մորուքը զվարճանում էր բոլորի հետ, հանաք էր անում, պարում և այնքան լավ էր վերաբերվում, վոր փոքր աղջիկը այլևս չէր վախենում նրա մորուքից և համաձայնվեց ամուսնանալ հետը:

Քաղաք վերադառնալուն պես հարսանիքը կատարվեց և փոքր քույրը փոխադրվեց Կապույտ Մորուքի դղյակը:

Հարսանիքից մեկ ամիս հետո Կապույտ Մորուքը իր կնոջն ասաց, վոր ինքը ստիպված է յերկար ժամանակ ճանապարհորդել շատ կարևոր գործով:

Նա քնքուլթյամբ մնաս բարով ասաց իր կնոջը, համոզեց նրան չձանձրանալ իր բացակայությանը, այլ ուրախանալ այնպես, ինչպես իրեն ցանկալի յէ:


— Ահա՛, — ասաց նա, — յերկու մեծ պահարանների բանալիները. ահա՛ վուսկյա և արծաթյա ամանեղենի պահարանի բանալիները. ահա փողերի արկղի բանալին. ահա թանգազին քարերի արկղինը: Ահա՛ այն բանալին, վորով կարելի յէ բանալ բոլոր սենյակների դռները: Ահա՛ վերջապես դարձյալ մեկ փոքր բանալի, վոր բաց է անում ներքևում, մուլթ միջանցքի ծայրը գտնված սենյակը: Բոլորը բաց արա, ամեն տեղ դնա, բայց խիստ և խիստ արգելում եմ քեզ մտնել փոքր սենյակը: Յեթե դու ինձ չլսես և բաց անես, այն դեպքում ամենախիստ կերպով կպատժվես:

Կինը խոստացավ Կապույտ Մորուքին ճշտությամբ կատարել նրա բոլոր հրահանգները: Կապույտ Մորուքը համբուրեց նրան, նստեց կառք և դնաց:

Յերբվոր Կապույտ Մորուքը հեռացավ, հարևանուհիները և բարեկամուհիները շտապեցին նրա կնոջ մոտ: Նրանք ուզում էին իսկույն տեսնել նրա անսպառ հարստությունը: Կապույտ Մորուքի մոտ նրանք վախենում էին գալ: Նրանց շատ վախեցնում էր նրա կապույտ մորուքը: Բարեկամուհիներն անմիջապես դնացին նայելու բոլոր սենյակները — մթերանոցները և պահարանները, — և նրանց զարմանքին վերջ չկար. ամեն ինչ յերևում էր այնքան հիանալի և գեղեցիկ:

Հարևանուհիները և բարեկամուհիները անընդհատ հիանում էին Կապույտ Մորուքի գանձերով և նախանձում էին նրա յերիտասարդ կնոջը: Բայց նրան այդ գանձերը յերբեք չէին զրավում: Նրան տանջում էր բուն հետաքրքրություն. նա ուզում էր բանալ միջանցքի ծայրին գտնվող փոքրիկ սենյակը:





«Այս, ի՞նչ կա արդյոք այդ սենյակում», մտածում էր նա շարունակ:

Նրա հետաքրքրութիւնն այնքան ուժեղ էր, վոր այլևս չդիմացավ: Թողնելով հյուրերին՝ նա դաժ վազեց դադտնի սանդուխից: Հասնելով փակ սենյակին, կանգ առավ: Հիշեց Կապույտ Մորուքի հրամանը, բայց չկարողացավ իրեն զսպել: Նա վերցրեց բանալին և ամբողջ մարմնով դողալով, բաց արեց սենյակը:

Սկզբում Կապույտ Մորուքի կինը վաշինչ չկարողացավ ջուր կել, վորովհետև սենյակի պատուհանները փակված էին: Մի քիչ սպասելուց և նայելուց հետո, նա հատակի վրա տեսավ արքի յուն և մի քանի մեռած կանայք: Նրանք Կապույտ Մորուքի նախկին կանայքն էին, վորոնց նա սպանել էր մեկը մյուսի հետեւից:

Յերիտասարդ կինը սարսափից լսելը կորցրեց, բանալին ձեռքից ընկավ: Ուշքի գալուց հետո, վերցրեց բանալին, փակեց դուռը և, բոլորովին դունատ, գնաց իր սենյակը:

Այդտեղ նա նկատեց բանալիի վրա մի փոքրիկ մութ բիծ — այդ արյուն էր: Նա սկսեց սրբել բանալին իր թաշկինակով, բայց արյան բիծը չէր անցնում: Նա սրբեց բանալին ավազով, կղմինդրի, փոշով, քերեց դանակով, բայց արյունը չմաքրվեց: յերբ արյունն անհետանում էր մի կողմում, յերեվան էր գալիս մյուս կողմում, վորովհետև այդ կախարդական բանալի յեր:

Այդ իսկ յերեկո անսպասելի կերպով վերադարձավ Կապույտ Մորուքը: Կինը վազեց նրան դիմավորելու, սկսեց համբուրել, և այնպես ձեռքերեց, վոր շատ ուրախ է նրա շուտ վերադառնալու համար:

Հաջորդ օրը Կապույտ Մորուքը պահանջեց կնոջից բանալիները, նա հանձնեց բանալիները, բայց ձեռները այնպես էին դողում, վոր Կապույտ Մորուքն անմիջապես դուշակեց ամենինչ, վոր պատահել էր իր բացահայտությանը:

— Ինչո՞ւ համար դու ինձ չսովիր բոլոր բանալիները, — հարցրեց Կապույտ Մորուքը: — Ո՞ր է փոքր սենյակի բանալին:

— Յերևի թողել եմ սեղանիս վրա, — պատասխանեց կինը: — Ի՞նչ անմիջապես, — հրամայեց Կապույտ Մորուքը:

Չանազան արդարացումներից հետո, կինը վերջապես բերեց դարձուրելի բանալին:

— Ինչո՞ւ համար բանալիի վրա արյուն կա, — հարցրեց Կապույտ Մորուքը:



—Չգիտեմ,— պատասխանեց խեղճ կինը և սպիտակեց ինչպես ձյուն:

— Չգիտե՞ս,— գոռաց Կապույտ Մորուքը:— Դե՛, յես լավ գիտեմ: Դու ներս ես մտել փակ սենյակը, դե լավ: Դու այնտեղ ես գնալու մի անգամ ել և մնալու յես ընդմիջտ, այն կանանց հետ միասին, վորոնց դու տեսել ես այնտեղ:

Խեղճը, հեկեկարով, ընկավ Կապույտ Մորուքի վրաները և նրանից ներողություն խնդրեց: Թվում է, քարերը պիտի զթային այդպիսի գեղեցկուհու վրա, բայց Կապույտ Մորուքի սիրտը բոլոր քարերից ավելի կարծր եր:

— Դու պետք է մեռնես,— ասաց նա,— և մեռնես այս րոպեյիս:

— Յեթե յես պետք է անպայման մեռնեմ,— ասաց կինն արտասուքով վողոված,— թույլ տուր ուրեմն քրոջս հրաժեշտ տամ:

— Քեզ տալիս եմ ուղիղ հինգ րոպե, բայց վոչ մի վայրկյան ավելի,— ասաց Կապույտ Մորուքը:

Խեղճ կինը գնաց վերև իր սենյակը և ասաց քրոջը.

— Աննա քույրիկ, վորտեղ են այժմ մեր յեղբայրները: Նրանք խոստացել են այսօր ինձ տեսության գալ: Բարձրացիր աշտարակը և տես, թե նրանք չե՞ն դալիս: Յեթե դու տեսնես նրանց, նշան արա, վոր շտապեն:

Աննա քույրը բարձրացավ աշտարակը, իսկ թշվառ կինը իր սենյակից կանչում եր նրան.

— Աննա՛, քո՛ւյր իմ Աննա, դու վոչինչ չե՞ս տեսնում:

Քույրը պատասխանեց.

— Յես տեսնում եմ փայլուն արևը և կանաչադարդ խոտը: Մինչդեռ, Կապույտ Մորուքը, ձեռքին բռնած մի մեծ դանակ, ամբողջ ուժով բղավում եր.

— Շո՛ւտ, այստե՛ղ արի: Քո ժամանակը հասել է:


— Իսկո՛ւյն, իսկո՛ւյն,— պատասխանեց նրան կինը և մի անգամ ել կանչեց.— Աննա՛, իմ քո՛ւյր Աննա, դու վոչինչ չե՞ս տեսնում:

Աննա քույրը պատասխանեց.

— Յես տեսնում եմ միայն փայլուն արևը և կանաչադարդ խոտը:

— Շո՛ւտ,— բղավեց Կապույտ Մորուքը,— թե չես յես ինքս կբարձրանամ վերև:

— Գալի՛ս եմ, գալի՛ս եմ — պատասխանեց նրան կինը և





նորից հարցրեց քրոջը, — Աննա՛, իմ քո՛ւյր Աննա, դու վոչինչ չե՞ս տեսնում:

— Յես տեսնում եմ փոշու մեծ ամպ, վոր մուտենում է մեզ, — պատասխանեց քույրը:

— Յեղբայրներս չե՞ն արդյոք, վոր գալիս են:

— Ա՛խ, վոչ, քույրիկ, դա վոչխարներէ հոտ է:

— Կիջնե՞ս վերջապես, — կանչեց Կապույտ Մորուքը:

— Սպասիր միայն մի րոպե ևս, — պատասխանեց նրա կինը և նորից հարցրեց:

— Աննա՛, իմ քո՛ւյր Աննա, դու վոչինչ չե՞ս տեսնում:

— Յես տեսնում եմ յերկու ձիավոր: Նրանք արշավում են այստեղ, բայց դեռ շատ հեռու յեն: Ա՛խ, — բացականչեց նա, — նրանք մեր յեղբայրներն են: Յես նրանց նշան կտամ, վորպեսզի նրանք շտապեն:

Բայց այդ ժամանակ Կապույտ Մորուքը վոտները դետնին խփեց և այնքան ուժգին ճիչ բարձրացրեց, վոր ամբողջ տունը դղրդաց: Խեղճ կինն իջավ ներքև և արտասուքով վողոված ընկավ նրա վոտներին:

— Վոչ մի արտասուք այժմ չի ոգնի քեզ, — սպառնալից սոսից Կապույտ Մորուքը, — դու պետք է մեռնես:

Նա բռնեց մի ձեռքով նրա մազերից, իսկ մյուսով բարձրացրեց իր ահարկու դաշույնը:

— Թույլ տուր մի րոպե ևս, — խնդրեց կինը:

— Վո՛չ, վո՛չ, — պատասխանեց Կապույտ Մորուքը:

Յե՛վ նա արդեն պատրաստվում էր թոցնելու խեղճի գլուխը:

Բայց այդ րոպեյին այնքան ուժեղ բաղխեցին դուռը, վոր Կապույտ Մորուքը կանգ առավ և շփոթվեց: Դուռը բաց արին և սենյակ մտան դժբախտ կնոջ յեղբայրները: Քաշելով իրենց դաշույնները, նրանք հարձակվեցին Կապույտ Մորուքի վրա: Նա ճանաչեց իր կնոջ յեղբայրներին և անմիջապես սկսեց փախչել: Բայց յեղբայրները հասան նրա հետևից, և ավելի շուտ քան նա հաջողեց նախասրահ նետվել, խփեցին նրան իրենց դաշույններով: Դրանից հետո նրանք գրկեցին և համբուրեցին վախից կիսամեռ քրոջը:

Շուտով յեղբայրները տեղափոխվեցին Կապույտ Մորուքի գոյակը և ուրախ ապրեցին այնտեղ, բոլորովին չհիշելով Կապույտ Մորուքին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կարմիր գլխարկը . . . . .	5
Եռչկակար կառույն . . . . .	10
Պստիկ-ձուտիկը . . . . .	18
Կախարգ . . . . .	31
Մոխրատիտիկը . . . . .	35
Ռիկ-Փուփուշիկը . . . . .	44
Քնած գեղեցկուհին . . . . .	51
Եշի կաշին . . . . .	60
Կապույտ Մորուք . . . . .	78





Կոնսուլսկի Վ. Թերգիբաշյան  
 Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան  
 Սրբազրիչ՝ Հ. Մանուկյան  
 Կոնսուլսկի սրբազրիչ՝ Ս. Շահբազյան

ՄԱՐԿԱԿԱՆՈՒՄ

0	Կոնսուլսկի սրբազրիչ
01	Տեխ. խմբագիր
02	Սրբազրիչ-Վանուկյան
03	Կոնսուլսկի սրբազրիչ
04	Կոնսուլսկի սրբազրիչ
05	Սրբազրիչ-Վանուկյան
06	Կոնսուլսկի սրբազրիչ
07	Տեխ. խմբագիր

Գլավիտի լիազոր Ղ— 4624. Հրատ. 4261.  
 Պատվեր 80, Տիրաժ 6000.  
 Փուղի 72x105, Տպ. 5 1/8 մամ.  
 Մեկ մամ. 31,460 նիշ, Հեղինակ. 3 1/2 մամ.  
 Հանձնված և արտադրության 19 հունվարի 1938 թ.  
 Ստորագրված և ապագրության 2 մարտի 1938 թ.

ԳՐԱԸ 1 Ռ. 50 Կ. ԿԱԶՄԸ 65 ԿՈՊ.

ԳԵՏՏՐԱՏԻ 1 ՏՊԱՐԱՆ, ՅԵՐԵՎԱՆ, ԼԵՆԻՆԻ ՓՈՂ. 65



«Ազգային գրադարան»



NL0381975



219

1899

ԳՆՆԸ 2.154.

42. - 10

ПЕРРО  
СКАЗКИ  
ГНЗ АРМ. ССР ЕРЕВАН